ՀՅԴ Պաշտօնաթերթ





# ԴՐՕՇԱԿ







Հունվար N01 (1616)

2010

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



Զինված ուժեր



"Դրոշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Մեծ ուժ է հասարակական կարծիքը 2

Հարցազրույց

Ժամանակի գետը 4

ՀՀ Ազգային ժողով

Բաժնետիրական կառավարման համակարգի
զարգացման մի քանի առաջարկների մասին 9

Հայ դատ

Եվրոպական համակարգը և
հայկական հարցը 16

Նվիրյալներ

Աստուծոյ ընտրեալ ազատարարն ու զոհը 24

Տեղեկանք

Կնոջ դերը
Իսրայելի պաշտպանության բանակում 33

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Դրօշակ - 1, 1910թ. 39

Նոր գրքեր

Որ ապրի հիշողությունը 40

Մատենագիտություն 43

Պատկերասրահ

Էդվարդ Խանոյան 48



Digitized by ARF PR Office

# Մեծ ուժ է հասարակական կարծիքը

Քաղաքական եւ ոչ այնքան քաղաքական որոշ վերլուծաբաններ, թէ մեզանում եւ թէ դրսում, հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը իրաւամբ այժմէական, կարեւոր եւ անհրաժեշտ համարելով, այնքան խանդավառուեցին, որ ծուլացան ոչ միայն Արձանագրութիւնների տողատակը եւ ենթատեքստը վերծանել, այլեւ յօդաբաշխ ընթերցել բուն տողը եւ բուն տեքստը: Ցաւօք, վերծանման եւ յօդաբաշխ ընթերցանութեան ունակութիւն չէր ցուցաբերել եւ Արձանագրութիւնների կազմմանը մասնակից հայկական դիւանագիտութիւնը:

Երբ խանդավառութիւնը հասաւ իր գագաթնակէտին, հայ եւ թուրք իշխանութիւնների՝ ընդառաջ մղուող քայլերը որակուեցին որպէս խիզախութիւն եւ, նոյնիսկ, բացայայտ ակնարկներ հնչեցին, թէ այս եւ այն կողմի ղեկավարներին Նոբելեան մրցանակ է սպասւում: Մրցանակը, իհարկէ, ԱՄՆ նախագահ Օբաման ստացաւ: Երեւի նա էր արժանաւորը: Թէ որքան էր Նոբելեանի հեռանկարը խթանել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը, պարզ չէ, բայց որ «խիզախութիւն» որակումը այս խնդրում անհնար է օգտագործել առանց «անմիտ», «անհեթեթ» ածականների, ակնյայտ էր ի սկզբանէ: Որովհետեւ՝ խիզախութիւն էր համարուել հասարակական կարծիքից առաջ ընկնելու փորձը, ճիգը: Այն էլ մի այնպիսի հարցում, ինչպիսին հայ-թուրքական յարաբերութիւնների սերտացումն է, ձգտումը բարիդրացիական յարաբերութիւնների ստեղծման, ինչին, կոյր աչքով էլ տեսանելի էր, պատրաստ չէին եւ չեն՝ ոչ մեզանում եւ ոչ Թուրքիայում: Առաջին քայլը չարած, դէպի տասներորդն էին լոք տալիս:

Հասարակական կարծիքը, մեզանում, ձեւաւորուել է պատմականօրէն, ամրացել յիշողութեամբ եւ արդարութեան հասնելու ձգտումով: Հայաստանում եւ այլուր ապրող ցեղասպանութեան զոհերի ժառանգներին եթէ ոչ գենետիկօրէն, ապա անպայման յիշողութեամբ փոխանցուել է կորստի ցաւը, մրմուռը: Սա տեսակի պահպանման ամենաճշգրիտ բանաձեւն է. թէ չես թունաւորւում եւ թէ չես կորցնում արդարութեանը հասնելու ձըգտումը: Կամ պիտի ապացուցես, որ սխալ է այս ընթացքը, հասարակութեան մէջ ձեւաւորուած այս մտայնու-

թիւնը ու դու՝ խիզախդ, ահա, պատմութեան բեմ ես ելել փոխելու իրերի վիճակը եւ կամ՝ քո խիզախութիւնը կոչուելու է անմիտ, անհեթեթ: Ապացուցել, որ սխալ է հասարակական կարծիքը, չի կարող եւ ոչ ոք, նոյնիսկ Աստուած, որովհետեւ, ցանկանանք թէ ոչ, այս հարցում գործ ունենք ազգային ինքնութեան, ազգային արժանապատուութեան հետ: Կարող են լռեցնել քեզ, ոչնչացնել, ջնջել, բայց փոխել այլեւս չեն կարող: Եւ, ուրեմն, սոյն խիզախութիւնը երկնաքերի տանիքից ցած նետուելու պէս մի արարք է:

Խիզախութիւնը հասարակական կարծիքով զինուած բանակցութիւնների սեղանի շուրջ նստելն է: Խիզախութիւնը ի լուր աշխարհի յայտնելն է, որ ես, ահա, սա եմ եւ ոչ թէ այն, ինչ դուք էք ցանկանում տեսնել: Փոքր եմ, թոյլ եմ, ջարդուած եմ, տուժած եմ՝ սա եմ, եւ այդպիսին եմ, որովհետեւ ինձ փոքրացրել են, թուլացրել, ջարդել, թալանել, եւ ահա, թէ ինչու եմ ես նաեւ պահանջատէր: Եւ պահանջատէր եմ ոչ միայն մարդկային, նիւթական, տարածքային կորուստների, այլեւ կորսուած ժամանակի, քաղաքակրթութեան առաջընթացից այսքան ետ մնալու համար: Տեսէք թէ ուր են հասել, վերջին հարիւրամեակում, զարգացած երկրները: Ամենայն իրաւունքով մենք այնտեղ պիտի լինէինք: Եթէ չասես այս ամենը, եթէ բանակցութիւնների սեղանի շուրջ չնստես այս իրողութեան իմացութեամբ ու գիտակցումով, ապա դիմացինդ պիտի թոյլ տաս մտածելու, թէ ինչ եղել՝ մոռացուել է: Քիչ էլ անցնի, եւ կարծես անցել է այդ «քիչ»-ը, դիմացինդ պատմութիւնը շրջուած է ներկայացնելու. ինչ եղել՝ քո մեղքով է եղել, դու ես դաւաճանել, դու ես խառնակել, դու ես թուրք ջարդել, դու ես ցեղասպանը: Հիմա էլ, ահա, խեղճ ցեղակցին ես նեղում՝ խլել ես նրա հողերը, միլիոնաւոր փախստականների թողել ես անտուն ու անտէր: Սա էլ, ուրեմն, Թուրքիայում իշխող հասարակական կարծիքն է: Եւ այս կարծիքի դէ՞մ պիտի խիզախէր թուրքական իշխանութիւնը: Ինչպէ՞ս խիզախէր, եթէ հէնց ինքն է հասարակական այս կարծիքը ստեղծողը:

Հայաստանի Սահմանադրական դատարանը Արձանագրութիւնների «թթուայնութիւնը» ստուգելու նպատակով դեռ մի կարգին չէր էլ թաթախել լուծոյթի մէջ լակմուսի թուղթը, երբ թուրք իշխանաւորները գունափոխուեցին: Իսկոյն: Աւելի թունդ, քան լակմուսի թուղթը: Եւ իրենց յայտարարութիւններով բացայայտեցին Արձանագրութիւնների թէ տեքստն ու ենթատեքստը, թէ տողն ու տողատակը:

«Նման մի օրինագիծ չի կարող գտնուել Թուրքիայի Ազգային մեծ ժողովում,- բացայայտում Արձանագրութիւնները նկատի ունենալով յայտարարեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ Ազգայնական շարժում կուսակցութեան (ՄէՀէՓէ խմբակցութեան նախագահի տեղակալ Օքթայ Վուրալը): - Ինչպէ՞ս կարող է մեր Մեջլիսում գտնուել մի այնպիսի յայտարարութիւն, որը չի ընդունում Կարսի պայմանագիրը, յայտնում է, թէ յետ չի քաշուելու Ղարաբաղից, եւ բացայայտ ասում է, թէ ցեղասպանութեան մասին պնդումները պահելու է օրակարգում... թուրք ազգի պատիւը չի կարելի ոտնահարել...»:

Իսկ հայինը կարելի՞ է...

Սահմանադրական դատարանի որոշումը արգելափակոցներ դրեց Արձանագրութիւններում տեղ գտած վտանգաւոր եւ հայավնաս յօդուածները կեանքի կոչելու ճանապարհին՝ ընդունելի համարելով միայն դիւանագիտական յարաբերութիւններ ստեղծելու եւ փակուած սահմանը բացելու դրոյթները, ինչի համար էլ, ի վերջոյ, պիտի կայանային բանակցութիւնները:

«Սիրելի հայրենակիցներ,- ասուած է ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի յայտարարութեան մէջ,- մենք կարող ենք եւ իրաւունք ունենք Սահմանադրական դատարանի այս որոշումը մեր համահայկական պայքարի, այդ պայքարին միացած քաղաքական եւ հասարակական կազմակերպութիւնների, մեր ամբողջ ժողովրդի որոշակի ձեռքբերումը համարել:

Բայց հիմնական պայքարը առջեւում է: Բազմապատկելով ընդհանուր ջանքերը, մենք պէտք է ՀՀ իշխանութիւններին մղենք ու պարտադրենք ամբողջացնել ու տրամաբանական աւարտին հասցնել գործընթացը: Մեր վերջնական նպատակն է՝ հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորել այնպէս, որ չվտանգուեն մեր ազգային-պետական շահերը եւ չզիջուեն մեր եւ մեր սերունդների արդարացի իրաւունքները»:

Յիրաւի մեծ ուժ է հասարակական կարծիքը: Մանաւանդ՝ երբ հաշվի է առնվում:

# Ժամանակի գետը

**«Դրօշակի» հարցերին պատասխանում է արձակագիր Վահագն Գրիգորյանը**



***Վահագն Գրիգորյան***

***- Աստանից շնորհավորում ենք ձեզ՝ Հայաստանի պետական մրցանակին արժանանալու համար: Հասարակությանը ծանոթ է գրող Վահագն Գրիգորյանի անունը և Պետական մրցանակը, թերևս, կընդլայնի այդ ծանոթության շրջանակը, սակայն քչերին է հայտնի Լիտվայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչմանը նպաստած ձեր գործունեությունը: Ինչպե՞ս սկսվեց և ծավալվեց այդ գործունեությունը:***

- Սկզբնական շրջանում, ապրելով Լիտվայում, ես շատ սերտորեն չէի առնչվում հայ համայնքի հետ: 2003 թ. նշվում էր Արամ Խաչատրյանի 100–ամյակն ու ես ստացա այդ առիթով կազմակերպված միջոցառումներին մասնակցելու հրավեր: Դրան հետևեց Նարեկացու «Մատյան ողբերգության» 1000-ամյակը և արդեն Գրողների միության հետ համագործակցելով, որոշեցի ընթերցումների երեկո անցկացնել, մանավանդ որ Նարեկացու հոյակապ թարգմանությունների հեղինակ Սիգիտաս Գյեդան, ով լիտվացի լավագույն բանաստեղծներից մեկն է և ով, ցավոք, անցյալ տարի մահացավ, համաձայնեց ինձ օգնել: Միասին հատվածներն ընտրեցինք ու կազմակերպեցինք երեկո, որի ընթացքում հերթով կարդում էինք՝ ես գրաբարով, նա՝ լիտվերեն: Դահլիճը լիքն էր թե մեր հայրենակիցներով, թե լիտվացիներով ու երբ ես դիտեցի երեկոյի տեսագրությունը հեռուստատեսությամբ, հասկացա, որ ճիշտ էր գրաբարով և ոչ թե աշխարհաբարով ընթերցումը, թեպետ սկզբից մտավախություն ունեի, որ դահլիճում նստած հայերին դժվար կլինի ընկալել: Իրականում գրաբարը մի անբացատրելի ազդեցություն ունեցավ, տեքստն ասես զրնգում էր, ոչ թե արտասանվում... Դուցե դա էլ իր դերը խաղաց հետագա իրադարձությունների զարգացման մեջ, համենայն դեպս, երբ 2005 թ. նշվելու էր Հայոց ցեղասպանության 90–ամյակը, ինչի առիթով որոշվեց հանձնաժողով ստեղծել, դեսպանի առաջարկությամբ ինձ ընտրեցին հանձնաժողովի նախագահ:

Ես մեծ պարտավորվածություն էի զգում, որովհետև աշխատանքն անչափ պատասխանատու էր ու ծավալուն և անհրաժեշտ էր անել առավելագույնը:

***- Իսկ ցեղասպանությունն ընդունելու կոնկրետ նպատակն արդեն հետապնդո՞ւմ էիք:***

- Իհարկե, Լիտվայի Ազգային ժողովին դիմելու մտադրությունը կար և նպատակն իրականացնելու համար մենք պիտի դաշտը նախապատրաստեինք, որպեսզի մեր խոսքը հասանելի դառնար: Հայաստանից բազմաթիվ նյութեր բերեցինք, ինքներս սկսեցինք գրականություն ուսումնասիրել, լուսանկարներ համակարգել, ինչ հնարավոր էր՝ ինտերնետի միջոցով ձեռք բերեցինք ու միայն այդ ամբողջ նախապատրաստական աշխա-

*- Պարոն Ավետիս, ինչո՞ւ Մարիին հետ մեր հարսանեկան այցին վատություն ըրիր մեզ:*

*- Ե՞ս, ձե՞զ, վատությո՞ւն,-ապշեց Ավետիսը:*

*- Այո՛: Ինչո՞ւ «Divan» տեղավորեցիր: Չգիտեի՞ր, որ գերեզմանատան՝ հայու ոսկորների վրա շինված է:*

*Եվ զգուշավոր Ավետիսը, հաստատելով նրա կանխազգացումը, ասաց.*

*- Պարոն Գնել, դուն երևի չես գիտեր. ողջ Թուրքիո հանրապետությունը հայու ոսկորներու վրա շինված է:*

*Գրիգորյան Վ., «Ժամանակի գետը»*

տանքն ավարտելուց հետո անցանք կազմակերպչական գործունեության: Զարմանալի պատրաստակամությամբ մեզ ընդառաջեց Լիտվայի Ցեղասպանության (40–ականների օկուպացիայի ժամանակ հազարավոր մարդկանց աքսորելուն և սպանդին նվիրված) ինստիտուտ-թանգարանը, որը նույնիսկ փող ներդրեց ցուցահանդես կազմակերպելու համար: Էքսպոզիցիան պատվիրվեց հայտնի մի դիզայներական ընկերության՝ թանգարանի մշտական գործընկերոջը: Մեզ հատկացրին առաջին դահլիճը, որտեղ և կատարվեց բացման արարողությունը: Նշեմ, որ թանգարանը տեղավորված է քաղաքի կենտրոնում գտնվող նախկին Պետանվտանգության շենքում և փաստորեն վեց ամիս շարունակ մեր պատմությանը ծանոթանալու հնարավորություն ունեին թե լիտվացիները, թե օտարերկրյա հյուրերը: Հետո ցուցահանդեսը տեղափոխվեց պառլամենտ, ընդ որում մեզ թույլ տվեցին կրկնել բացման արարողությունը ու խնդրեցին, որ բացման խոսքն ասի ոչ թե մեր արտգործնախարարը, ինչպես նախապես պայմանավորվել էինք, այլ մեկ ուրիշը, պատճառաբանելով, թե Թուրքիայի դեսպանն առանց այդ էլ բողոքներով ողողել է մամուլը: Այնուամենայնիվ բացումն ուղեկցվեց բազմաթիվ ելույթներով ու ողջույնի խոսքերով:

Իսկապես որ ցուցահանդեսը շատ ազդեցիկ էր ու հաջողված, մանավանդ ընտրված էր շարժական տարբերակը և հետագայում ցուցահանդեսը շրջագայեց մի շարք քաղաքներով:

***- Իսկ ի՞նչն էր հատկապես նյարդայնացրել Թուրքիայի դեսպանին: Նա արդեն տեղյա՞կ էր, որ հայերը ցեղասպանությունը ճանաչելու դիմում են ներկայացնելու:***

- Նրան արդեն իսկ անհանգստացնում էր մեր ակտիվությունը: Ապրիլի 24–ին մենք հանրահավաք կազմակերպեցինք, ընդ որում մի փոքր խորամանկելով. քանի որ Թուրքիայի դեսպանության առաջ մեզ թույլ չէին տա ելույթ ունենալ, մենք թույլտվություն ստացանք հանրահավաքն անցկացնել Ռատուշայի դիմաց: Սակայն բանն այն է, որ թուրքական դեսպանատունը գտնվում է Ռատուշայի հարևանությամբ, նույն հրապարակում, այնպես որ նրանք մեզ լավ էլ լսում էին ու լավ էլ տեսնում:

Իսկ դիմումը պառլամենտ հանձնեցինք հանրահավաքի նախօրեին: Մինչ այդ, և դրանից հետո էլ, պատգամավորները հնարավորություն ունեին ավելի խորը ուսումնասիրել հարցը՝ շնորհիվ հայտնի բանաստեղծ, թարգմանչուհի Մարիտե Կոնտրիմայտեի, ով տարիներ շարունակ լիտվացիներին մատուցել է մեր դասական և ժամանակակից գրականությունը և որն այս անգամ էլ վիթխարի աշխատանք կատարեց, թարգմանելով բազմաթիվ նյութեր պատգամավորների դատին ներկայացնելու համար: Ու դեկտեմբերի 15–ին Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը մտավ նիստի օրակարգ: Մեծ աջակցություն ցուցաբերեցին պառլամենտի հայկական խմբի ղեկավար Ալգիս Կաշետան և անդրկովկասյան խմբի ղեկավար Կլումբիսը, որն անձամբ եկել էր Հայաստան, հանդիպել Դաշնակցության ֆրակցիայի ներկայացուցիչների հետ: Եվ շատ կարևոր էր, որ նրանք երկուսն էլ բարի համբավ ու հարգանք վայելող քաղաքական գործիչներ էին, ինչը մի կողմից նպաստում էր մեր օգտին նրանց խոսքի

*Որ պատերազմը ցեղային մաքրագործման լավագույն ժամանակն է, իհարկե, Թուրքիան է հայտնագործել, և այդ պատիվը ոչ ոք չի կարող նրանից խլել, բայց ահա Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նա որոշեց, որ սխալ կլինի նորից նույն գետը մտնել, և դարձյալ շահեց: Մինչ Գերմանիան ինքնամոռաց ողջակիզում էր հրեաներին, թուրք նորարարները ազգային փոքրամասնությունների հետ հաշիվները մաքրելու ավելի նուրբ եղանակ էին մշակում: Իհարկե, դժվար է պնդել, որ նրանց ձեռքերը քոր չէին գա, եթե Խորհրդային Միությունը Ստալինգրադում պարտվեր, Միացյալ Նահանգներն էլ զորք չիջեցներ Եվրոպայում, բայց ինչ չի եղել՝ չի եղել, չթերագնահատենք Աթաթուրքի հեռատեսությունը: Երկրորդ աշխարհամարտն, իհարկե, սկսվեց ու ավարտվեց առանց Աթաթուրքի, բայց նրա սերմանած ազգայնականությունը, ինչպես ժամանակն ապացուցեց, մեկ օրվա ու մեկ սերնդի համար չէր:*

*Գրիգորյան Վ., «Ժամանակի գետը»*

ազդեցությանը, մյուս կողմից՝ բացառում էր կաշառված լինելու տարբերակը: Նրանք ստորագրահավաք անցկացրեցին, իսկ հետո պառլամենտ հրավիրվեցինք մենք՝ հայ համայնքի ներկայացուցիչներս:

Այդ ողջ գործընթացն ուղեկցվում էր թուրք դեսպանի բողոքներով մամուլում՝ սկսած նրանից, թե ինչպե՞ս են լիտվացիները հանդուրժում հայերի քարոզչությունն իրենց սուրբ թանգարանում, ու վերջացրած՝ որ հայերը կեղծում են իրականությունը: Որոշ մարդկանց վրա այդ հրապարակումներն ազդել էին, նույնիսկ հարցը կասեցնելու փորձեր եղան, օրինակ՝ փոխխոսնակի կողմից, որն օրվա վերջում ամբիոն բարձրացավ հաջորդ նիստի օրակարգը ներկայացնելու մտադրությամբ: Սակայն նրան ընդհատեցին հենց պատգամավորները, ասելով, որ դեռ մի չլուծված հարց ունեն քննարկելու: Առաջարկություն եղավ նաև հարցը տեղափոխել Արտաքին գործերի հանձնաժողովի օրակարգ, քննություն վարել, պարզաբանումներ մտցնել, բայց մեծամասնությունն այնուամենայնիվ պնդեց, որ պարզաբանումների անհրաժեշտություն չկա, քանզի բոլորն էլ գիտեն, որ ցեղասպանությունը եղելություն է: Վերջին ելույթը Կլումբիսինն էր, ով բուն թեմային ավելացրեց, որ հարցը վերաբերում է առաջին քրիստոնյա ժողովրդին և որ Սուրբ Ծննդի նախօրյակին ծագող հետևությունն ակնհայտ է: Վերջապես հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց ընդամենը երեք ձեռնպահով:

*- Փաստորեն սա Լիտվայում մեր առաջին իսկ փորձի արդյո՞ւնքն էր:*

- Դրանից տասը տարի առաջ հայկական համայնքը նման գործընթաց սկսել էր, որին, ի դեպ, մասնակցել էին նաև հույներ ու այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Բայց այն ժամանակ, հավանաբար, քաղաքական միտքը դեռևս հասունացած չէր, հետո ինքը՝ Լիտվան մտահոգված էր իր սեփական չլուծված խնդիրներով... Բայց ես մի ուրիշ բան եմ ուզում նշել, որ նկատեցի իմ այս գործունեության ընթացքում: Այնտեղ քաղաքացիական ինքնագիտակցությունն ու, ես կասեի, հետաքրքրասիրությունն անհամեմատ ավելի բարձր է, քան մեզանում: Եվ ոչ միայն սեփական խնդիրների պարագայում: Երբ Լիտվայում արդեն սկսեց խմորվել հայերի ցեղասպանության ճանաչման մասին միտքը, մարդիկ բացահայտ հետաքրքրություն ցուցաբերեցին: Ազգային ռադիոն մի քանի հաղորդումներ կազմակերպեց այդ թեմայի շուրջ, հարցազրույցների էին հրավիրվում պատգամավորներ, որոնց հետ անմիջական կապի մեջ կարող էին մտնել ունկնդիրները, հարցեր տալ, կարծիք արտահայտել... Ասածս այն չէ, որ շարքային լիտվացին օր ու գիշեր նստած տառապում է հայկական հարցով, այլ այն, որ եթե երկրում ինչ-որ իրադարձություն է սպասվում, եթե երկրի պառլամենտը հարկ է համարում մի ուրիշ ազգին վերաբերող հարց քննարկել, ուրեմն դու որպես քաղաքացի նույնպես այդ հարցի տերն ես: Էլ չեմ ասում մեր հայրենակից՝ Լիտվայի քաղաքացիների մասին: Վիլնյուսում է ապրում Գեղամ Գրիգորյանի դուստր Հասմիկը, որն ազգային օպերային թատրոնի հանրահայտ և սիրված մեներգչուհիներից է: Մեր այս գործընթացի հաջողությանը նա նույնպես նպաստեց, մասնակցելով մի շատ գեղեցիկ մշակութային միջոցառման: Եվրոպայի, այդ թվում և Լիտվայի ազնվական տներ է վերադարձել պոետիկ կամ երաժշտական երեկույթներ անցկացնելու ավանդույթը: Այդպիսի պալատներից մեկի շքեղ դահլիճում հայ համայնքը Կոմիտասի երեկո կազմակերպեց, որտեղ Հասմիկը ունկնդիրներին հիացրեց Կոմիտասի իր սքանչելի կատարումներով: Համերգին ճանաչված երաժշտագետներ էին հրավիրված, բարձրաստիճան հյուրեր, հեռուստաալիքների ներկայացուցիչներ: Այդպիսի միջոցորոն իհարկե կնպաստի նպատակիդ իրականացմանը:

*- Իսկ այսօր Լիտվայի քաղաքական, հասարակական շրջաններում ինչպե՞ս են գնահատում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման արձանագրությունները, Ադրբեջանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ: Լիտվայում տեղյա՞կ են հայաստանյան իրադարձություններին, ՀՅԴ և ազգային մի շարք ուժերի, Սփյուռքի ընդվզմանը, Սահմանադրական դատարանի որոշմանը, Թուրքիայի անդրադարձին:*

- Այսօր, ցավոք, լիտվացիների վերոնշյալ հետաքրքրությունը հետզհետե վերածվում է անտարբերության, եթե չասեմ ավելին: Նախ Լիտվայի ու Ռուսաստանի ակնհայտ թշնամական հարաբերությունների ներքո Հայաստանն իբրև

> *«Պատմությունը թուրքից ավելի պարզերես ազգ չգիտի» հայտարարությունն ինձ հիացրեց: Ինչքա՛ն թափ կա մեջը: Մի ուրիշ վարչապետ (ուրիշ երկրի) բերանը բացելուց առաջ տասն անգամ կմտածեր, լեզվին եկածն այդքան անգամ կխոտաներ, հետո, ջանալով ոչ ոքի չնեղացնել, կծամծմեր. Մենք, գիտեք... ձեր մասին ոչ ճիշտ պատկերացում կա... թյուր կարծիք է ձևավորվել... մենք, հավատացեք, ուրիշներից վատը չենք... և այլն, և այլն: Իսկ թուրք վարչապետը տարել-բերել, ապտակելու պես շրխկացրել է՝ ահա՛ մենք սա՛ ենք, իմացեք ու տեղներդ վեր ընկեք: Ինչպե՞ս չհիանաս: «Անհնար է, որ մեր պապերը հանցագործ եղած լինեն», «մեր պատմությունը երբեք մեր գլուխն ամոթով խոնարհելու առիթ չի տվել» և նման այլ հայտարարությունները, իհարկե, նույնպես ամեն առաջնորդի բան չեն, այնուհանդերձ, ինչ-որ չափով սովորական էին դարձել, համենայն դեպս այլևս չէին զարմացնում: Վարչապետը (արտգործնախարարի նվազակցությամբ) արդեն քանի տարի հավատարիմ էր իր խաղացանկին, նույնիսկ Եվրոմիությանն էր հետևողականորեն միևնույն պիտակը կպցնում՝ «քրիստոնեական ակումբ», ինչը եվրոպական արժեքների հանդեպ թերևս այնքան կայուն արհամարհանքի արդյունք էր, որ խուզում էր նրա երևակայության թևերը: Այնպես որ, նրա նոր հայտարարությունը, ինչպես ասացի, ինձ հիացրեց: Նոր բարձունք է: Նույնիսկ այնքան անհավանական, որ ուզած-չուզած մտածում եմ, ոչ թե սնապարծության, այլ հիվանդության մասին:*
>
> *Գրիգորյան Վ., «Ժամանակի գետը»*

Ռուսաստանի «սոյուզնիկ», չի կարող դիտվել առանձին, ինչը նաև Թուրքիայի ու Ադրբեջանի վերջին տարիներին ակտիվացած քարոզչության և Հայաստանի պասիվության արդյունքն է: Ըստ որում, քաջ գիտակցելով, թե Լիտվայի հատկապես ո՞ր ցավոտ տեղին է պետք սեղմել, նրանք շեշտում են հենց հայ-ռուսական վնասաբեր համագործակցությունը:

Անցյալ տարի Լիտվա մտավ ու կայուն հաստատվեց Ալիևի հիմնադրամը, որը ոչ ջանք, ոչ էլ ֆինանսական միջոցներ է խնայում Ադրբեջանի շահերը հասանելի դարձնելու համար: Կազմակերպվում են միջոցառումներ, ներգրավվում են լրագրողներ, պատմաբաններ, մշակույթի գործիչներ, ինտերնետ-կայքեր, որոնք բացահայտ ադրբեջանամետ քաղաքականություն են վարում: Ու եթե հինգ տարի առաջ մենք մեր ուժերով կարողացանք արդյունավետ գործունեություն ծավալել, ապա այսօր պահանջվում է մեր պետության լուրջ հովանավորությունը: Լիտվայի հայ համայնքը շատ փոքրաքանակ է և ամենաեռանդուն աշխատանքի դեպքում անգամ հնարավոր չէ ոտք գցել թուրք կամ ադրբեջանական քարոզչական մեքենայի հետ: Երբ որևէ մի երկրում այլ ազգի շահերի մասին խոսում է այդ ազգի ներկայացուցիչը, դա բնական է և ոչ միշտ համոզիչ, իսկ երբ նույն խոսքը հնչեցնում է երկրում ճանաչված ու հարգված մեկը (երկուսը, շատերը), երբ նա հանկարծ հանդիսանում է այլ ազգի շահերի ջատագովը, շարքային քաղաքացին համոզվում է: Իսկ դրա համար մեծ փողեր են անհրաժեշտ, և նույն Ադրբեջանն այդ փողը չի խնայում: Մեկ էլ տեսնում ես՝ ինչ-որ լրագրող, որն, իբր, ժամանակին եղել է Ղարաբաղում, այնքան համոզիչ է ներկայացնում Ղարաբաղը Ադրբեջանի սեփականություն լինելու փաստերը, որ քիչ է մնում դու էլ հավատաս: Կամ հանկարծ մի հրեա է հայտնվում ու իր ելույթով գրեթե թուրքերի համար սեփական կյանքը տալու պատրաստակամություն հայտնում: Մի ազգային ինտերնետ-կայք ներսի խրոնիկները թողած օր ու գիշեր Ադրբեջան է գովերգում, հոդվածներ հրապարակում, ֆիլմեր ցույց տալիս: Հրապարակումներից մեկին պատասխանել է Լիտվայի հայ համայնքի ակտիվ գործիչներից Ռուսլան Հարությունյանը, ում հետ միասին էինք ծավալել ցեղասպանության ճանաչման գործընթացը և որի կինը հենց բանաստեղծ, թարգմանչուհի Մարիտե Կոնտրիմայտեն է: Միանգամից ինտերնետ-կայքում հայտնվեց ականարկներով լի հարձակում, թե, իբր, գիտենք նյութի հեղինակին էլ, նրա կնոջն էլ, որը հայերից ավելի ազգայնական է, և այլն...

Սրան մի պարզ բացատրություն կա՝ հակառակորդդ գործ է անում: Եվ ո՞վ կարող է նրան մեղադրել: Մեղադրելն անհեթեթություն է – դու էլ գործ արա:

Ինչ վերաբերում է կոնկրետ հայ-թուրքական արձանագրություններին, ապա այդ թեման նույնպես շատ մակերեսորեն արծարծվեց. ոչ հեռուստաալիքներն առանձնապես անդրադարձան, ոչ էլ լայն շրջանակներում քննարկվեց: Լրատվական ծրագրերը սահմանափակվեցին լուրը հայտնելով, որից շարքային քաղաքացին կարող էր բնական մի եզրակացության գալ. դե լավ է, որ սահմանները կբացվեն ու Հայաստանն այլևս մեկուսացված չի լինի:

Իսկապես անհնար է փոքրաթիվ համայնքով մի ամբողջ երկրի բարյացակամ վերաբերմունքը ձևավորել: Մեզանում ո՛չ կուսակցականներ, մաս-

նավորապես՝ դաշնակցականներ կան, որպեսզի համատարած ընդվզումների մասնակից դառնան ու դարձնեն, ո՛չ մեծ քանակի մտավորականներ, որ կարողանան խոսք պահանջել, ոչ էլ մեծահարուստներ, որ ցանկացած պահին գումար տրամադրեն: Նույնիսկ Հայաստանի դեսպանի նստավայրը գտնվում է Վարշավայում, որտեղից նա ընդամենը վերահսկում է երեք բալթյան պետությունները... Իսկ թուրք դեսպանն այդ ընթացքում թուրքերեն սովորել ցանկացողների համար անվճար համալսարան է բացում, գրադարանները ազգագրական գրքերի թարգմանություններով ողողում, երաժշտական դպրոցներ է ֆինանսավորում, իհարկե իր պետության հովանավորությամբ... Հայաստանի անմիջական ու հետևողական ուշադրությունն էլ է անհրաժեշտ, պիտի տեր կանգնես, այլ կերպ չի լինում:

Հիմա կարծես թե արտգործնախարարությունը մտադրվել է աշխուժանալ, հավանաբար ցեղասպանության 95–ամյակի առիթով Ադրբեջանում վերջերս հրատարակված շքեղ ալբոմից հետո, որտեղ ներկայացված են մեր գրեթե բոլոր եկեղեցիներն ու տաճարներն իբրև «Արևմտյան Ադրբեջանի պատմամշակութային հուշարձաններ»: Ես հետս նոր փաստագրական գրականություն եմ տանում համալսարաններում և գրադարաններում տեղադրելու, նաև այս անգամ միջոցառումները համալրելու Բաքվի ու Սումգայիթի դեպքերի մասին նյութերով:

*- Ազգագրական ու փաստագրական նյութերն, անշուշտ, ամենաուժեղ զենքն են ազգային ինքնության ու շահերի պաշտպանության պայքարում: Բայց չէ՞ որ քարոզչական աշխատանքին իր կարևոր նպաստը կարող է բերել ազգային մշակույթն իր բուն նշանակությամբ: Ձեր «Ժամանակի գետը» վեպը ի վերջո ստեղծվել է հասարակական և քաղաքական գործունեության շնորհիվ ու վերածվել է գեղարվեստական գրքի: Չե՞ք կարծում, որ հայ գրականության համապատասխան գործերի թարգմանությունները այլ, և հատկապես թուրքերեն, լեզուներով նույնպես անհրաժեշտություն են:*

- Այո, «Ժամանակի գետն» իսկապես այդ գործունեության արդյունքն է. երբ ես արդեն այնքան էի հագեցած կարդացածս նյութերով, որ կարծես թե ուրիշ բան աշխարհում ինձ այլևս չէր հետաքրքրելու. ելք էի փնտրում: Ու քանի որ իմ այդ «հիվանդ» վիճակը հավանաբար ակնհայտ էր նաև շրջապատին, ինստիտուտ-թանգարանի տնօրեն Դալյա Կոռուդիտեն ինքն ինձ առաջարկեց գիրք գրել, ճիշտ է՝ ավելի գիտականին մոտ, խարսխված ցուցահանդեսի շուրջ հետազոտված նյութերի և իմ արդեն իսկ տպագրված հոդվածի վրա: Մի քանի օր մտածեցի, հետո որոշեցի, որ գիտական աշխատություն գրելն իմ գործը չի, ես գեղարվեստական գիրք գրող եմ: Բայց նաև գիտակցում էի, որ ձեռքիս տակ ունեցած նյութը մի մեծ հարստություն է, ու ի վերջո վեպի կառուցվածքն ինքնին ձևավորվեց. գեղարվեստական սյուժեի, հորինված հերոսների կյանքի ու ճակատագրի մեջ մխրճվող իրական դեպքերը պահպանված են փաստերի և փաստաթղթերի տեսքով:

Ես չգիտեմ, թե որքանով թուրքերը կողջունեն նմանատիպ գեղարվեստական գործերի թարգմանությունը, բայց, անշուշտ, դա մեծ հարված կլինի մեր կողմից գոնե անսպասելիության առումով: Հայաստանի պասիվությունը մշակութային քարոզչության ասպարեզում թմրացրել է թե Թուրքիային, թե Ադրբեջանին, նրանք համոզված են, որ այսօր թուրքալեզու գրողը շատ ավելի պահանջված է աշխարհում, քան հայալեզուն, ու այս հանգամանքը բացատրվում է հենց թարգմանված գրքերի առկայությամբ: Հայաստանն իբրև պետություն ինքը պիտի գիտակցի դրա կարևորությունը ու չսպասի, մինչև գրողը դռնեդուռ ընկնելով միջոցներ հայթայթի ռուսերեն, անգլերեն կամ, առավել ևս, թուրքերեն թարգմանությունների համար: Մանավանդ, եթե պետությունը պարգև տալու աստիճանի գնահատել է գրողի ստեղծագործությունը, ուրեմն պարտավոր է աշխարհին էլ ցուցադրել իր գնահատականը:

*Կհաջողվի՞ մեզ Արևելքից Արևմուտք, Հյուսիսից Հարավ միավորվել «Վերադարձ Հայրենիք» գաղափարի շուրջը: Նույնքան միաձույլ, որքան մի քանի հոգով կարող ենք գլուխ-գլխի խմբվել 5-րդ փողոցի փոքրիկ սրճարանում: Պարզ ցանկությունը կարո՞ղ է մեծ նպատակ դառնալ: Տարիների միջով, սերունդների միջով անցնող Ժամանակի գետի նման հարահոս, նրա գարշահոտություններից կենսունակ նպատակ: Անկեղծ ասած, չգիտենք: Երեկվա փորձը տխուր հուշեր է բերում («անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար» ընթացքի), և հունվարյան գիշերվա մթամած երկինքը դանդաղ իջնող տապանաքար է թվում մեզ, պատուհանի ճեղքից սվսվացող քամին՝ դամբանական: Բայց սիրտդ աղերսում է գոնե մի աչքով կտրվել երեկվա օրից ու ապրել մինչև լուսաբաց:*

*Գրիգորյան Վ., «Ժամանակի գետը»*

*Հարցազրույցը վարեց Լիլիթ Հովսեփյանը*



# ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Արծվիկ Մինասյան*

Հայաստանի Հանրապետության 1990 թ. անկախացումից սկսած հանրապետությունում բաժնետիրական ընկերությունների ստեղծումն ու գործունեությունը կարգավորվել է գերազանցապես ենթաօրենսդրական ակտերով և օրենքների թերի դրույթներով: Կառավարության 1991 թ. թիվ 162 որոշմամբ հաստատվեցին «Բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կանոնադրությունները», 1992 և 1993 թթ. ընդունվեցին «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շրջանառության մասին» օրենքները: 1996 թ. ընդունվեց «Բաժնետիրական ընկերությունների մասին»[1] օրենքը, որը ձևավորվելով նշված ժամանակաշրջանի ոգով, թեև կատարեց իր դրական դերը Հայաստանի տնտեսական օրենսդրության հստակեցման ուղղությամբ, այնուամենայնիվ չէր կարող բավարարել բիզնեսի վարման բաժնետիրական ձևին ներկայացվող և օրեցօր առաջացող խաղի կանոնների հստակեցման պահանջներին: Բացի այդ, 1999 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր Քաղաքացիական օրենսգիրքը, ինչպես նաև 2000 թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» օրենքը (որը հետագայում ուժը կորցրեց 2007 թ. ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» նոր օրենքով)

[1] Ի դեպ, 222 հոդվածներ ունեցող այս օրենքի ՀՀ ԱԺ-ում քննարկումների ժամանակ ՀՅԴ-ն հանդես եկավ 260 առաջարկություններով, որոնց 45%-ը ընդունվեց կառավարության կողմից և իրացվեց օրենքում, իսկ 40%-ի մասով կառավարությունը ընդունելով առաջարկություններով ներկայացված գաղափարները, խոստացավ հանդես գալ նոր նախաձեռնություններով: Սակայն, առ այս պահը կառավարությունը չի կատարել իր խոստումը:



պարտադրում էին վերանայել «Բաժնետիրական ընկերությունների մասին» 1996 թ. օրենքը, ինչն էլ կատարվեց 2001 թվականին` համանուն օրենքի նոր խմբագրությամբ ընդունման միջոցով: Թեև դրանից հետո գործող օրենքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ ու լրացումներ, սակայն կան հարցեր, որոնք կարիք ունեն լուծման և նոր մոտեցումների որդեգրման: Անշուշտ կարիք կա նոր օրենքի ընդունման, պայմանավորված կորպորատիվ կառավարման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգերի զարգացման հրամայականով, խաղի կանոնների հստակեցմամբ և շուկայական տնտեսության պայմաններում բազմաձև սեփականության իրավունքների պաշտպանության վստահելի համակարգի ձևավորմամբ:

Սակայն այս պահին հրատապ համարվող մի շարք խնդիրների լուծման նպատակով ՀՅԴ խմբակցությունը մշակել և շրջանառության մեջ է դրել Քաղաքացիական օրենսգրքում, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքներում փոփոխությունների 2 նախագծեր, որոնք մի կողմից բխում են հանրապետությունում ձևավորված գործարար միջավայրի բարելավման պահանջներից (օրենսդրության պահանջների տարակերպ մեկնաբանություններից խուսափելու միջոցով խաղի կանոնների հստակեցում, աշխատանքի արտադրողականության բարձրացում), մյուս կողմից` միտված են նվազեցնելու ներդրումային ռիսկերը (փոքր բաժնետերերի սեփականության իրավունքի պաշտպանության ուժեղացման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, բիզնեսի վարման անհարկի ծախսերի վերացման միջոցով և այլն):

**Ըստ այդմ.**

Առաջին հիմնահարցը վերաբերում է «կանոնադրական կապիտալ» (charter capital) հասկացության օրենսդրական սահմանմանն ու դրա պրակտիկ կիրառմանը: Հայաստանյան օրենսդրությունում այս հասկացությունն օգտագործվում է 2 նպատակով`

**1.** կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձանց միջև ներդրումային և դրանից բխող հարաբերությունները սահմանելու նպատակով (օրինակ` բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության չափին համապատասխան, հասարակ բաժնետոմսերի սեփականատերը ձեռք է բերում ձայնի իրավունք և մասնակցության տեսակարար կշռին համապատասխան` ընկերության որոշումների վրա ազդեցության հնարավորություն),

**2.** կանոնադրական կապիտալն օգտագործվում է որպես հաշվարկային մեծություն` առանձին նորմատիվների սահմանման ժամանակ:

Սակայն փոփոխության ենթակա օրենսդրական մի շարք դրույթներ այս հասկացությունը փորձել են կապել նաև կազմակերպության պարտավորությունների հետ, մինչդեռ այն ոչ միայն ըստ էության կապ չունի տվյալ կազմակերպության կարողությունների (գույքային և ոչ գույքային իրավունքների ամբողջության) հետ, այլև արհեստականորեն խոչընդոտ է դառնում առանձին կազմակերպությունների կողմից փոխառու միջոցների ներգրավման ժամանակ, կամ պարտադրում է կազմակերպությանը գնալ լուծարման: Այսպես, Քաղաքացիական օրենսգիրքը և բաժնետիրական ընկերությունների մասին օրենքները սահմանում են, որ կանոնադրական կապիտալը ընկերության պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափն է: Մինչդեռ, կանոնադրական կապիտալը ոչ միայն ընկերության գույքը չէ (այն ընդամենը արտացոլում է ընկերության տվյալ պահի մասնակիցների կողմից ընկերության սեփականությանը փոխանցված որոշ գույքի որոշակիորեն սահմանված (որպես կանոն հիմնադրման ժամանակ) արժեքի դրամական գնահատականի հաշվարկային մեծությունը), այլև էականորեն տարբերվում է ընկերության գործունեության դինամիկ վիճակից (ընկերությունը գործում է

անընդհատության սկզբունքով, ստանձնում և կատարում է պարտավորություններ, ձեռք է բերում և իրացնում է իրավունքներ, որոնցից յուրաքանչյուրը առանձին-առանձին կամ միասին վերցված ժամանակի ցանկացած պահի կարող են ձևավորել ընկերության ֆինանսատնտեսական առանձին վիճակ):

Միջազգային պրակտիկան այս հասկացության փոխարեն հաճախ օգտագործում է «բաժնետիրական կապիտալ» (share capital) հասկացությունը, որը սակայն չի սահմանափակում պարտավորություններ ստանձնելու կամ դրանք կատարելու կազմակերպության իրավունքները:

Այս հասկացությունը առավելապես օգտագործվում է հաշվարկներ կատարելիս և արտացոլվում է կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում, կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կամ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունների գնահատականներում: Հետևաբար՝ կապ տեսնել ընկերության պարտավորությունների հետ, նշանակում է մի կողմից էականորեն սահմանափակել կազմակերպությունների ազատ գործունեությունը, մյուս կողմից՝ ռիսկի ենթարկել ընկերության պարտատերերին: Վերջին դեպքում հարկ է բերել հետևյալ օրինակը. ընկերությունը, որն իր կազմավորման պահին ձևավորել է կանոնադրական կապիտալ 100 մլն. դրամի չափով, մեկ



տարվա ընթացքում կարող է կատարել ցանկացած բնույթի ծախսեր (օրինակ՝ բիզնես պայմանավորվածությունների շրջանակում կազմակերպվում են գործուղումներ), որոնց վերջնական արդյունքները կարող են տեսանելի լինել կամ չլինել: Արդյունքում՝ այդ գումարը ծախսվում է, սակայն այն չի կարող որևէ երաշխիք հանդիսանալ ընկերության պարտավորությունների համար: Մինչդեռ, եթե հետևենք օրենսդրական առկա սահմանափակումների տրամաբանությանը, ապա ընկերությունը ձևականորեն պետք է ցույց տա (արտացոլի իր հաշվետվությունում), որ ինքն ունի 100 մլն. դրամ կանոնադրական կապիտալ: Անբարեխիղճ տնօրենը կամ խոշոր բաժնետերը, պարտատերերից առանց երաշխիքի կարող է ներգրավել ևս այդքան գումար: Արդյունքում՝ պարտատերերը ոչ միայն կկորցնեն իրենց գումարները, այլև օրենսդրական պահանջի ձևական կողմը կստեղծի անվստահություն իրական տնտեսական գործառնությունների նկատմամբ:

Հարկ է նաև փաստել, որ ներկայումս տնտեսական գործունեության ոլորտում կանոնադրական կապիտալը ներդրումային ռիսկերի գնահատման տեսանկյունից որևէ էական ուշադրության չի արժանանում թե փոխառու միջոցներ տրամադրողների և թե կազմակերպության հետ գործարքներ իրականացնող գործընկերների կողմից: Հիմնականում, որպես այդպիսի ցուցանիշ, օգտագործվում է ընկերության զուտ ակտիվների արժեքը[2] (shareholders, equity): Բացի այդ, ներդրումային որոշումներ կայացնելիս ներդրողները, հատկապես փոխառու միջոցներ տրամադրողները, գերադասելապես առաջնորդվում են ընկերության գույքային վիճակով, ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու երաշխիքներով, շուկայում մրցունակ և իրացվող ապրանքների ու ծառայությունների տրամադրման հնարավորություններով և այլն:

Ուստի, օրենսդրական փոփոխությամբ առաջարկվում է կանոնադրական կապիտալ հաս-

[2] Ընդհանրացված տեսքով այն ընկերության ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերությունն է կամ ընկերության սեփական կապիտալը:

կացությունը չկապել ընկերության կողմից պարտավորություններ ստանձնելու հնարավորությունների հետ, ընկերություններին չդրդել օրենքի պահանջները շրջանցելու մեխանիզմներ, իսկ պարտատերերին՝ զերծ պահելու իրենց իրավունքները պաշտպանելու ոչ արդյունավետ միջոց գործադրելուց:

Երկրորդ հիմնահարցը վերաբերում է բաժնետոմսերի համախմբման (consolidation) դեպքում բաժնետիրոջ սեփականության իրավունքի պաշտպանությանը: Գործող օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում երկու կամ ավելի բաժնետոմսեր փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի: Համախմբման հետևանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հետգնման ընկերության կողմից՝ շուկայական արժեքով: Օգտագործելով այս հնարավորությունը, հայաստանյան մի շարք բաժնետիրական ընկերությունների խոշոր բաժնետերեր ազատվում են իրենց համար անցանկալի բաժնետերերից՝ առանց վերջիններիս համաձայնության բաժնետոմսերի դիմաց կատարելով «անկախ գնահատողի» կողմից որոշված վճարումը: Ձևավորված արատավոր պրակտիկան առավել պարզ ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը. ենթադրենք բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1000000 դրամ, որը բաղկացած է 500 դրամ անվանական արժեքով 2000 հատ սովորական բաժնետոմսերից: Բաժնետոմսերը բաշխված են հետևյալ հարաբերակցությամբ՝ Ա-ն ունի 5%-ը կամ 100 հատ բաժնետոմս, ընդհանուրը՝ 50000 դրամ անվանական արժեքների հանրագումարով, Բ-ն ունի 80%-ը կամ 1600 հատ բաժնետոմս, ընդհանուրը՝ 800000 դրամ անվանական արժեքների հանրագումարով, իսկ Գ-ն՝ 15%-ը, կամ 300 բաժնետոմս, ընդհանուրը՝ 150000 դրամ անվանական արժեքների հանրագումարով: Բ-ն ցանկանում է գնել բոլոր բաժնետոմսերը, սակայն Ա-ն և Գ-ն, տարբեր պատճառներով, չեն համաձայնում դրանք վաճառել: Բ-ն որոշում է օրենքի վերը նշված հիմնավորմամբ ազատվել այս բաժնետերերից և հրավիրելով բաժնետերերի ընդհանուր ժողով՝ կայացնում է բաժնետոմսերի կոնսոլիդացիայի մասին որոշում, որի արդյունքում 500 հատ 500 դրամ անվանական արժեքով բաժնետոմսերը պետք է փոխարինվեն 1 հատ 250000 դրամ անվանական արժեքով բաժնետոմսերով (ընդամենը՝ 4 բաժնետոմս, յուրաքանչյուրը 250000 դրամ): Այս որոշման գործադրման արդյունքում բաժնետերերի միջև բաժնետոմսերի բաշխման նոր հարաբերակցությամբ Ա-ն կունենա 0,2 (1/5) հատ, Բ-ն 3,2 (3 ամբողջ 1/5) հատ, իսկ Գ-ն՝ 0,6 (3/5) հատ բաժնետոմս: Օգտվելով օրենքով ընձեռված հնարավորությունից՝ Բ-ն պարտադրում է ընկերությանը հետ գնել Ա-ի, Գ-ի և իր՝ կոտորակային մաս կազմող բաժնետոմսերը՝ անկախ մյուս բաժնետերերի համաձայնությունից: Արդյունքում, քանի որ Ա-ն և Գ-ն ունեն միայն կոտորակային բաժնետոմսեր, նրանք զրկվում են բաժնետոմսերի նկատմամբ իրենց սեփականության իրավունքից, իսկ Բ-ն դառնում է ընկերության միակ բաժնետերը[3]: Ուստի, նշված խնդիրը լուծելու, ինչպես նաև բաժնետերերի իրավունքները պաշտպանելու նպատակով, առաջարկվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում ավելացնել «բաժնետիրոջ համաձայնությամբ» բառերը, ինչը կնշանակի, որ բոլոր դեպքե-



[3] Իրականում այս ընթացակարգը որոշ բարդություններ ունի՝ կապված դատական կարգով սեփականության իրավունքի պաշտպանության հետ: Սակայն այն հեշտությամբ հաղթահարվում է խոշոր բաժնետիրոջ կողմից ձևական բաժնետիրոջ առաջացման, նրա կողմից բաժնետոմսի գնի շուրջ անհամաձայնությամբ կամ որևէ այլ պատրվակով դատական հայց հարուցելու միջոցով:

րում բաժնետիրոջ կամահայտնությունը անհրաժեշտ պայման կլինի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու համար:

Երրորդ հիմնահարցը վերաբերում է փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ նախապատվության իրավունքին: Գործող օրենքի համաձայն, փակ բաժնետիրական ընկերության բաժնետերն ունի այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Օրենքի համաձայն՝ փակ ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Նախապատվության իրավունքի ժամկետը չի կարող բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օրից պակաս և 60 օրից ավելի լինել: Սակայն հայաստանյան իրականության մեջ բաժնետոմսերը վաճառող բաժնետերը շրջանցում է օրենքի այս դրույթը՝ բաժնետոմսերի նվիրատվություն կազմակերպելով: Արդյունքում՝ ընկերության մյուս բաժնետերերը, փաստացի, զրկվում են բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրենց իրավունքից: Սա այն դեպքում, երբ նախապատվության իրավունքը, ՀՀ օրենսդրության համաձայն, ենթակա է գործադրման նույնիսկ ժառանգության դեպքում: Ուստի, այս իրավիճակը շտկելու համար, օրենսդրական փոփոխությամբ առաջարկվում է սահմանել, որ նախապատվության իրավունքը գոր-






ծում է նաև բաժնետոմսերի անհասույց փոխանցման դեպքում՝ վաճառքի գնի ողջամիտ առաջարկի պայմաններով և ընկերության կանոնադրությամբ նախատեսված կարգով ու ժամկետներով:

Չորրորդ հիմնահարցը վերաբերում է ընկերության կանոնադրության դերակատարմանը: Միջազգային պրակտիկան և հայաստանյան գործարար սովորույթները վկայում են, որ շատ հարցեր ենթակա են կարգավորման ոչ թե օրենքի իմպերատիվ դրույթներով, այլ բաժնետերերի միջև կայացված համաձայնությամբ և ընկերության կառավարման մարմինների լիազորությունների հստակ ձևակերպմամբ: Որպես դրա դրսևորման լավագույն եղանակ դիտվում է կանոնադրությունը, որը սահմանելով խաղի կանոններ, պարտադիր է դառնում տվյալ ընկերության բաժնետերերի և ընկերության կառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց համար: Այս անհրաժեշտությամբ պայմանավորված, փոփոխությունների մի մասը վերաբերում է բաժնետերերի կողմից որոշման կայացման ձայների նվազագույն քանակին: Օրինակ, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են մասնակիցների ձայների 51%-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակություն նախատեսված չէ, կամ ընկերության կանոնադրական կապիտալը կարող է մեծացվել նաև ընկերության խորհրդի որոշմամբ, եթե այդպիսի իրավունքը կանոնադրությամբ վերապահված է նրան և այլն:

Հինգերորդ հիմնահարցը վերաբերում է ընկերության կողմից իր աշխատակիցների աշխատանքի արտադրողականությունն ու շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով շահույթից մասհանումներ կատարելուն և բաժնետոմսեր հատկացնելուն: Գործող օրենքը ամրագրել է սահմանափակում, որի համաձայն ընկերության աշխատակիցների միջև բաժնետոմսերի տեղաբաշխումը կատարվում է այդ նպատակի համար աշխատակիցների բաժնետիրացման հասույց հիմնադրամի միջոցների հաշվին՝ բաժնետերերից հետ գնած բաժնետոմսերից: Ընդ որում աշխատակցի բաժնետոմսերի մասը

չպետք է գերազանցի կանոնադրական հիմնադրամի քսանհինգ տոկոսը, իսկ դրանց դիմաց վճարվող գումարը կարող է անվանական արժեքից ցածր լինել, բայց ոչ պակաս քսանհինգ տոկոսից: Ինչպես վկայում է միջազգային փորձը, աշխատակիցների միջև բաժնետոմսեր տեղաբաշխելու մեխանիզմը համարվում է աշխատանքի և ընկերության արտադրողականությունը բարձրացնելու կարևոր միջոցներից, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության տեսակներից մեկը: Փոփոխության առաջարկությունը միտված է վերացնելու օրենքով նախատեսված քանակական այս սահմանափակումը՝ հնարավորություն տալով ընկերությանը առավել ճկուն լինելու իր բիզնես որոշումներում և աշխատակիցների բաժնետիրացման միջոցով խթանելու տնտեսական ժողովրդավարական հարաբերությունները:

Վեցերորդ հիմնահարցը կապված է ընկերության կողմից լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու մեխանիզմները զարգացնելու հետ: Այս համատեքստում առաջարկվող փոփոխությունները միտված են ընդլայնելու ընկերության կողմից ֆինանսական միջոցներ ներգրավելու գործիքակազմը՝ կապված արտոնյալ բաժնետոմսերի հետ: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսերի, ինչպես նաև ֆինանսական տարբեր գործիքներով միջոցների ներգրավման դասակարգումները գերազանցապես ֆինանսական ստանդարտների կարգավորման, այլ ոչ թե օրենքով խիստ սահմանափակումների տիրույթում են: Բացի այդ, փոփոխության առաջարկների մի մասով օրենսդրորեն հնարավորություն է տրվելու կատարել աշխարհում շատ տարածված՝ ընկերության պարտքերի վերակառուցում (ռեստրուկտուրիզացիա), որի արդյունքում ընկերության պարտատերերը կարող են դառնալ բաժնետերեր:



Ամփոփելով բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ այս փուլի առաջարկությունների ներկայացումը, հարկ ենք համարում փաստել, որ դրանք բոլորը չեն և մեր գործունեության հետագա ընթացքում այս ոլորտը լինելու է ՀՅԴ խմբակցության ուշադրության կենտրոնում: Մենք հույս ունենք, որ դրանք կարժանանան ինչպես կառավարության, այնպես էլ Ազգային ժողովի պատգամավորների մեծ մասի դրական դիրքորոշմանը՝ դրանով իսկ ուժեղացնելով կորպորատիվ կառավարման համակարգը, էական հիմքեր ստեղծելով արտադրական կամ տնտեսական ժողովրդավարության տարածված մոդելների գործարկմանը հայրենի տնտեսությունում, ինչպես նաև էականորեն բարելավելու մեր հանրապետության բիզնես միջավայրը:

# «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՆՎԱԳԸ» ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

## (Միքայել Վարանդյանը քաղաքական իրապաշտության մեկնիչ)

Լևոն Շիրինյան
Քաղաքական գիտությունների դոկտոր



Միքայել Վարանդյան

19-րդ դարի 60-ական թվականներից մինչև Առաջին աշխարհամարտ իրականացված հայոց մտավոր-քաղաքական վերածննդի գործում իր ուրույն տեղն ունի Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան, 1872-1934), որը գիտատեսական որոնումների ու քաղաքական գործունեության ոլորտ մտավ 19-րդ դարի վերջին տարիներին և պայքարի հրապարակում մնաց շուրջ չորս տասնամյակ: Փիլիսոփայություն ու հասարակական գիտություններ ուսումնասիրեց Եվրոպայում՝ Գերմանիա, Շվեյցարիա, և ստացած բազմակողմանի գիտելիքները ծառայեցրեց ազգային հեղափոխության ռազմավարության ու գործելակերպի տեսական հիմնավորմանը: Այդ տեսանկյունից, թերևս, նա իրեն հավասարը չունեցավ: Նա իր կայուն ու նշանակալից տեղը գրավեց հայ գիտաքաղաքական ու սոցիալ-փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Վարանդյանի մուտքը (գիտա)քաղաքական հետազոտությունների ոլորտ աննկատ չմնաց սոցիալ-դեմոկրատիայի հայազգի գործիչների համար

ևս: Հայտնի են նրան տրված Ս. Սպանդարյանի, Ս. Շահումյանի թունդ գնահատականները: Վարանդյանի ստեղծագործական ժառանգությունը, բնականաբար, «վերլուծվել» և «արժևորվել» է խորհրդահայ փիլիսոփայության կողմից (Հ. Գաբրիելյան[1], Վ. Սևյան[2], Բ. Անանիկյան[3] և ուրիշներ):

Սակայն, ժամանակը ինքը սրբագրում է կողմնակալ գնահատականները: Եվ այսօր, պատահական չէ, որ Վարանդյան-տեսաբանը, Վարանդյան-քաղաքական գործիչը «անհանգստացնում է» հայ գիտաքաղաքական միտքը, ուղղորդում հետազոտողների որոնումները: Քանզի Վարանդյանն իր փոթորկոտ ու բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում փորձել է ըմբռնել մարդկության առաջընթացի ներքին տրամաբանությունը, նրա համատեքստում՝ հայ ժողովրդի անվտանգ գոյության ու Հայաստանի պատմական զարգացման հեռանկարը:

Հետամուտ առաջադրված խնդրին՝ ստեղծել է մինչև օրս իրենց նշանակությունը չկորցրած մեծարժեք գործեր, որոնց մեջ առանձնանում է *«Հայկական շարժման նախապատմություն»* (Ժնև, հ. 1, 1912, հ. 2, 1913) ուսումնասիրությունը, որտեղ, դոկտոր Խ. Թութունջյանի գնահատմամբ, «հանգամանորեն հիմնավորված է ժամանակակից հայության ազգ-պետություն դառնալու ձգտումը և անխուսափելի բնույթը հայ հեղափոխական ազատամարտին...»[4]: Նրա օրգանական շարունակությունը կազմող և նրան համակողմանիորեն լրացնող հոդվածաշարեր՝ *«Ուշացած մարգարեներ. Լենին և հայկական շարժումը»*[5] *և «Հիսուն տարի առաջ (1877-1927)»*[6]:

* * *

Վարանդյանը վառ արտահայտված երկրաքաղաքական ենթատեքստ ունեցող իր գործերում վեր է հանում աշխարհագրական բարդ միջավայրում հայ ժողովրդի դարավոր պայքարի ու մաքառումների ընթացքը, երբ, թվում է, անէացման դատապարտված ժողովուրդը, անհամար զրկանքների ու տեսական խարխափումների ուղեկցությամբ կարողացավ, այդուհանդերձ, «ճողոպրել <...> անօրինակ նահատակության անդունդներից, ծածանելով մշտապես <...> ոչ միայն իր *գոյության*, այլև համեստ, թանկարժեք *քաղաքակրթության* դրոշը, <և> գնում է թառելու քաղաքակրթության սանդուղքի պատվավոր աստիճանների վրա, գնում է բազմելու լուսավոր ժողովուրդների արեոպագում...»[7]:

Դժոխային պայմաններում նա ստիպված է եղել ընտրություն կատարել «երկու ահավոր տերերի»՝ ռուսական ծովի և թուրքական դևի միջև, «երբեմն համբուրել իրեն հարվածող, զգետնող ձեռքը, որովհետև այդ ձեռքը փոքրագույն չարիքն էր, որովհետև նրանից ավելի զարհուրելին կար»: Եվ դա արևմտյան տերությունների դիվանագիտական մշտնջենական խարդավանքների ուղեկցությամբ:

Սակայն, ընդգծում է Վարանդյանը, նա միշտ ձգտել է իր հայրենիքի «երեք հատվածների մեջ» «ուժ տալ ամենուրեք քաղաքական վերածնության, նվաճել ամենուրեք պետականություն, իշխանության մի մասնիկը, ստեղծել ամենուրեք այն անհրաժեշտ պայմանները, այն քաղաքական-ընկերային մթնոլորտը, ուր նա կարողանա ազատորեն զարգանալ, բարգավաճել՝ միացած, ձեռք-ձեռքի տված, դրացի, բախտակից ժողովուրդների հետ»:

Վարանդյանի քննախույզ հայացքի առաջ հայկական շարժման նախապատմությունն է (մինչև 1890-ական թվականներ), այդ շարժման հեղափոխական ընթացքը՝ Արևելյան հարցի համատեքստում, խոշոր տերությունների, գլխավորապես Անգլիայի, Ռուսաստանի մրցակցությունը Հայաստանի ու Հայկական հարցի շուրջ: Զուգահեռաբար նա տալիս է հայության ամբողջական բնութագրի մեկնաբանությունը, նրա «մշտադալար սերվիլիզմի» (ծառայամտու-

[1] Գաբրիելյան Հ., Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը, Երևան, 1960: Նույնի՝ Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1966 և այլն:
[2] Սևյան Վ., Հայ բուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն. 20-րդ դարի սկիզբ, Երևան, 1971:
[3] Անանիկյան Բ., Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, Երևան, 1974:
[4] Թութունջյան Խ., Միքայել Վարանդյան (Հ.Յ.Դաշնակցության տեսաբան-գաղափարախոսը), «Հայրենիք», 1936, թիվ 5, էջ 109:
[5] «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 59-71, թիվ 1, էջ 104-130, 1926, թիվ 3, էջ 97-107, թիվ 4, էջ 84-98:
[6] «Հայրենիք», 1927, թիվ 11, էջ 84-94, 1928, թիվ 9, էջ 80-90, թիվ 10, էջ 81-90:
[7] Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, Ժնև, 1912, հ. 1, էջ 4-5:

թյան) ու կրավորականության անողոք քննադատությունը: Եվ նույն ժողովրդի անմնացորդ նվիրումը քաղաքակրթական ու մշակութային առաջադիմությանը, անկեղծ ակնածանքը հանդեպ արևմտյան արժեքները: Ու նրա դեմ հանդիման՝ թուրքական իրականությունը, թուրքն «իր բնազդներով ու ավանդական քաղաքականությամբ»:

Վարանդյանը ցավով նկատում է, որ արևմտահայությունը, տալով «հերոսության բազմաթիվ ու հոյակապ տիպարներ», այդուհանդերձ, չկարողացավ ծնել երկիրը կամ նրա որևէ խոշոր հատվածը ընդգրկող ազատագրական շարժում: Իսկ Զեյթունը, Սասունը և նրանց համարժեք ապըստամբական օջախները մնացին հերոսացման և ըմբոստացման սովորական «ովասիսներ»: Մեծապես ազդվելով Ֆրանսիական մեծ հեղափոխության ազատարար գաղափարներից՝ արևմտահայությունն ընտրեց դիմադրության ու պայքարի խաղաղ եղանակներ: Նա գնաց պայքարի սահմանադրական ուղիով, տուրք տալով, զուգահեռաբար, դիվանագիտական ֆետիշին*:

Ավելին, Հայկական շարժումը, արձանագրում է Վարանդյանը, եղավ «ժողովրդային՝ ոչ ազգային»: Այն չընդգրկեց ժամանակի հայ հասարակության բոլոր դասակարգերին, բոլոր հատվածներին, ընկերային խմբերին ու շերտերին: Նա չեղավ ամբողջական: «Ազգային չեղավ հայ ազատագրական շարժումը, այն իմաստով, ինչ իմաստով ըմբռնվել և մղվել է այն՝ ուրիշ, ավելի առաջադեմ երկրներում, Իտալիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Իռլանդիայում և նույնիսկ Հունաստանում,- հավաքական ու համերաշխ ճիգերով, ազգի բոլոր դասակարգերի միահամուռ գործակցությամբ»[8]:

Թուրք կառավարությունն իր հերթին «շնորհելով» Ազգային սահմանադրություն (1863 թ.)՝ հետապնդում էր սեփական նպատակներ, անուղղակի քայքայելով հայոց կրավորական տրամադրությունները, օգտագործելով Սահմանադրությունը որպես մոլորեցնող (դիվերսիոն) գործիք և շարժումը պահելով նրա շրջանակներում: Նա, այդպիսով, պատրաստեց նպաստավոր հողը ապագա զանգվածային ջարդերի: Նույն կրավորականությունն իր աղետաբեր դերն ունեցավ Մեծ եղեռնի տարիներին:

Հայ տարրը, ընդգծում է Վարանդյանը, «չունեցավ տարրական կանխատեսություն»՝ ըմբռնելու, որ վաղ թե ուշ «անպայման անհրաժեշտությամբ» դրվելու է հայ քաղաքական հարցը ևս, ինչպես թուրքահպատակ մյուս եվրոպական ժողովուրդներինը, իսկ օսմանյան կառավարությունը պատասխանելու է իր ավանդական մեթոդներով...

Դեռևս 1870-ական թվականների վերջերին «Փունջ»-ը (Կ. Պոլիս) գույժ էր տալիս հայոց «հիմնական ու մահացու վերքը», «մարտական պետքերի լիակատար զանցառումը, ֆիզիկական ինքնապաշտպանության լիակատար անտեսումը»: Նա արհամարհեց, գրում է Վարանդյանը, չըմբռնեց «պատմափիլիսոփայության անագորույն նշանաբանը. «Կռվով միայն պետի նվաճես իրավունքդ», «Ուժն է միայն, որ կառաջնորդե դեպի իրավունքի իրականացումը»: Եվ երբ պատմական իրադարձությունների անկասելի ընթացքը արծարծեց նաև Հայկական հարցը, մասնավորապես Բեռլինի վեհաժողովում (1878 թ.), արևմտահայությունը Հայաստանում «մեռյալ տարր» էր (Իգնատև):

Նա չուներ «երկաթե շերեփը»: Վարանդյանի բնութագրմամբ, հայոց ճակատագրի վարիչները չկռահեցին, որ սոսկ եվրոպական չափանիշներով «հիվանդ մարդը», ամենուրեք քայքայում ու ապականություն արտադրող օսմանյան հրեշը, եվրոպական ժողովուրդների անզիջող մտրակի հարվածների տակ անդառնալիորեն մղվելու է Եվրոպայից դեպի Ասիա՝ անցնելով Հայոց լեռնաշխարհով, տարածվելու է դեպի Արևելք, այնտեղ, որտեղից դարեր առաջ սկսել է արշավել: Ջեյմս Բրայսն, օրինակ, կանխատեսել էր, որ «Աբդուլ Համիդը հղացել էր հայության բնաջնջ-

* «Չարիքը հայկական դիվանագիտության այս կամ այն ձևի ու վրիպումի մեջ չէր,- ընդգծում է Մ. Վարանդյանը,- այլ այդ դիվանագիտության էության մեջ»: Եվ «եթե ճիշտ է, որ մեծ պետությունները այս կամ այն արևելյան կնճիռը հարթելու ատեն կղեկավարվեին յուրաքանչյուրը իր շահով, ապա մյուս կողմեն ճիշտ է և այն, որ հանդեպ ըմբոստ ժողովուրդի մը, որ կսպառնա պարբերաբար ու տևողաբար փոթորկել քաղաքական կացությունը և խռովել դիվանագիտական հանգիստը, հանդեպ այդպիսի ժողովուրդի մը՝ նույն պետությունները ստիպված են իրավախոհել, միջոցներ փնտռել գոհացում տալու անոր պահանջներուն» («Հայրենիք», 1928, թիվ 10, էջ 84, 87): Չարիքը հայկական խնդիրը բացառապես դիվանագիտական միջոցներով լուծելու փորձի մեջ էր, «երկաթե շերեփը» անտեսելու մեջ (տե՛ս նույն տեղը, էջ 10): Տե՛ս նաև Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, հ. 2, էջ 151:

8 Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, Ժնև, 1913, հ. 2, էջ 91:

ջումի ծրագիրը Բեռլինի վեհաժողովեն անմիջապես հետո»* և, ըստ Բրայսի, «դժվար չէր նախատեսել հակահայ արշավանքը...»[9]:

Իսկ զգացմունքներով ու գաղափարախոսական դոգմաներով առաջնորդվող հայությունը, անտեսելով քաղաքական աշխարհագրության հրամայականները, շարունակում էր ռոմանտիկ հրճվանք ապրել, նույնիսկ իր կարողությունների սահմաններում նպաստել բալկանյան ժողովուրդների ազատագրությանը, դրանով իսկ նպաստելով թուրքերի տեղաշարժին դեպի Արևելք և պատեհ-անպատեհ կրկնում էր հայոց համար մահաբեր «հիվանդ մարդու» կանխադրույթը՝ սին հույսեր կապելով սահմանադրական ու բարենորոգվող Թուրքիայի հետ**:

Բեռլինի վեհաժողովը, ըստ էության, դեպի Արևելք, դեպի Հայաստան թուրքական մեծ ու վերջնական քաղաքական կտրուկ շրջադարձի (volte-face) սահմանագիծն էր: Այդպես դրվեց դանդաղ գործողության ռումբի մահաբեր վտանգը, այդտեղ է հայոց հետագա բոլոր ջարդերի ու Մեծ եղեռնի մեկնակետն ու բուն պատճառը: Եվ հայ հեղափոխության անխուսափելի ծնունդը: Ֆրանսիայի դեսպան Կամբոն իրավացիորեն նկատում էր. «Իր անգործությամբ Բարձր դուռը սրբագործեց հայկական շարժումը...»:




* Բանաստեղծ Գամառ-Քաթիպան ևս կանխատեսել էր թուրքական շրջադարձը: Նա գրում էր.

Սլավոնի ձեռքեն թափված շղթան
Քեզ պիտի կկապե, խղճո՛ւկ Հայաստան:

9 «Հայրենիք», 1928, թիվ 10, էջ 90, 1927, թիվ 11, էջ 91, «Դրօշակ», 1899, թիվ 4, էջ 51-53:

** Ի դեպ, Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան) Բալկանյան պատերազմի ընթացքում (1912 թ.) գտնում էր, որ զուտ դիվանագիտական ճանապարհով հնարավոր չէ լուծել Հայկական հարցը, և ստեղծվել է նպաստավոր վիճակ Արևմտյան Հայաստանում ապստամբություն կազմակերպելու համար: «Պետք է... օգտվիլ թուրքերու պարտություններ և Պալքաններուն մեջ ու Պոլսո շուրջ չափազանց զբաղված ըլլալեն և ոտքի հանել Թրքահայաստանը» (տե՛ս Դարբինյան Ռ., Կյանքիս գրքեն, Բեյրութ, 1972, հատ. Ա, էջ 421): Ռուբենի առաջարկը Պոլսի Ազգային խորհուրդը մերժեց: Եվ իզուր: Թեկուզև ճիշտ էր գնահատված երկրաքաղաքական իրադրությունը և ճիշտ էր հաշված երկրաքաղաքական հաշվեկշիռը Թուրքիայի շուրջ: Սակայն պատմությունը «եթե»-ներ չունի:

Նաև. ռազմավարական իրադրության ճշգրիտ ընկալման տեսանկյունից շշմեցնող է Բալկանյան պատերազմում թուրքերի դեմ կռվող Անդրանիկի ջոկատի վիրավոր զինվորի կանխազգացումը: Ես, պատմում է տարաբախտ հայորդին, պառկած էի Ֆիլիպպոլի հոսպիտալում շուրջ 10 օր: Մեզ է այցելում Բուլղարիայի թագուհին, հարցաքննում է ամեն ինչի մասին: Ես նրան ասում եմ. «Ձեզ համար արդեն լավ է: Դուք թուրքերին քշում եք Ասիա, իսկ նրանցից մեզ համար կրկնակի վատ է լինելու»: Թագուհին պատասխանում է. «Սպասեք, ձեզ համար էլ լավ է լինելու» (Троцкий Л., Перед историческим рубежом. Балканы и балканская война (1913 г.), изд. 1926): (Հիրավի, երկու տարի հետո հայության համար, իրոք, լավ եղավ):



RÉPUBLIQUE ARMÉNIENNE

Délégation à la Conférence de la Paix

1356

27, AVENUE MARCEAU

Paris, le 14 Février 1920

PASSEPORT DIPLOMATIQUE

AU NOM DU GOUVERNEMENT DE LA REPUBLIQUE ARMENIENNE, Nous, Soussigné, Président de la Délégation de la REPUBLIQUE ARMENIENNE à la Conférence de la Paix, avons délivré le présent Passeport Diplomatique à Monsieur Mikaël VARANDIAN, agé de 48 ans, qui se rend de Paris en Italie, en qualité de Représentant Diplomatique de notre Gouvernement auprès du Gouvernement Italien.

Թուրքական այդ շրջադարձն էլ ծնեց իր «դիվային հանճար»-ին՝ Աբդուլ Համիդին: Վերջինս, նկատում է Վարանդյանը, խնդաց «պատմության գահավիժող հորձանքի մեջ» անհատի դերը ժըխտող «ձախլիկ ու անկայուն թեորիայի վրա», «ինչպես որ նա խնդաց հարյուր հազար հայկական դիակների վրա»[10]: Համիդը այն համոզմունքն ուներ, թե, ինչպես ինքն է գրում, «*Թուրքիան մեկ պայմանով* միայն կարող է ապրել,- այն՝ որ բոլոր օսմանցիները կանգնած մնան հավատարմությամբ <...> սուրբ օրենքի հիմնավուրց ու ամուր պատվանդանի վրա. այլապես <...> պիտի հոշոտվենք քրիստոնյա պետությունների ձեռքով, որոնք բոլորն էլ ձգտում են կործանել մեզ»[11]:

Եվ հրապարակ նետվեց Հայաստանի անէացման քաղաքականությունը: (Այն իր գագաթնակետին հասավ երիտթուրքերի և Քեմալի կառավարման տարիներին):

Օսմանյան քաղաքական միտքը, նրա քաղաքական ղեկավարությունը՝ Համիդը, երիտասարդ թուրքերը և նրանց հաջորդները, գտնում են և իրագործում համապատասխան քաղաքականություն:

Հաշտեցնում և համադրում են երկու ներհակ ուղղություն՝ մի ձեռքով «տալիս են» բարենորոգումներ (Պոլսում և կայսրության այլ կենտրոններում) հայերին, սիրիացիներին, արաբներին, մյուս ձեռքով (հատկապես գավառներում, *բուն Հայրենիքում*) հետ առնում այն, ամայացնում երկիրը:

1877-1878 թվականներից սկսած կայսրության ողջ տարածքում սկսվում է մինչ այդ նախադեպը չունեցող «արյան ու ավերածի աշխարհասասան քաղաքականություն»:

Գործի է դրվում նաև *քրդական* մահակը: Թուրք կառավարության կողմից վարպետորեն օգտագործվում են հայ-քրդական հակասությունները, նոմադ (քոչվոր) ցեղի տնտեսական շահագրգռություններն ու նախաքաղաքակրթական բնազդները: Նա օգտվում էր այն նկատառումից, որ հայոց հարցը «իր իրավական ծագման մեջ» հայ-քրդական հարաբերությունների հարց էր, որը գոյություն է ունեցել դարերից ի վեր, իրապես (de-facto), թեկուզև իրավապես (de-jure) հրապարակ է հանվել 19-րդ դարի 70-ական թվականներին միայն[12]: Չէ՞ որ մինչ այդ ոչ մի այլ

10 Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, հ. 2, էջ 239:
11 Տես նույն տեղը, էջ 246:
12 Տես նույն տեղը, էջ 96:

տարր պատմական Հայաստանի սահմաններում այն աստիճան չի վնասել հայության ֆիզիկական ու մշակութային գոյությանը, ինչպես քուրդը:

Արևմտյան Հայաստանի վիճակը էլ ավելի էր ծանրանում Ռուսաստանի գաղութարարական ռազմավարության հետևանքով, որը Վարանդյանի բնութագրմամբ «զուտ քաղաքական-նվաճողական բնույթ ուներ»[13]:

Ուրեմն, պատահական չէ, որ, ընդհանուր առմամբ, Ռուսաստանն իր արևելյան քաղաքականության մեջ առաջնորդվեց Հայոց հարցի լուծման *«համիտենական ձգձգումների ու վախճանական վիժումի»* (ընդգծումն իմն է.- Լ. Շ.) ռազմավարությամբ: Այն բխում էր ռուսական գաղութարարական էությունից: Ռուսաստանի համար, ընդգծում է Վարանդյանը, «հետաքրքրականը ապագա *գրավումի ու կցումի* ծրագիրն էր...»[14]:

Ուշագրավ է Վարանդյանի կողմից ռուսական աշխարհակալության «համապատասխան տակտիկի» ընկալումը, այն, որ «ռուսական վտանգը» մի կետում վայրկենաբար «չքանալով», լույս էր ընկնում մի այլ կետում, «ավելի ուժեղ ու սպառնական»: Մեկնելով իր երկրաքաղաքական շահերից, որի հիմքում ընկած էր «տիրապետության տենչը», Ռուսաստանը «նախ իր «հովանավորության» տակ է առնում որևէ երկիր, ապա հրահրում է նրա մեջ երկպառակումներ, վերջապես, միացնում է իր թագավորության, որպեսզի «վախճան դրվի» այն խռովություններին ու անկարգություններին, որ նա «ինքն է ստեղծել կամ հանդուրժել»[15]:

Եվ եթե Օսմանյան կայսրության հանդեպ «խորքին մեջ» նույնն է եղել Ռուսաստանի (և ոչ միայն նրա) ռազմավարությունը՝ անընդհատ «ամեն պատառներ» պոկել նրա նեխող ու անդամահատվող մարմնից, տարբեր է եղել իրագործման եղանակը՝ կախված պատմական տարբեր վիճակներից և միջազգային ուժերի դասավորությունից, մասնավորապես Անգլիայի հետ ունեցած մրցակցության կարողականությունից: Այդ առումով Ալեքսանդր Երկրորդի սպանությունից և վարչապետությունից Լոռիս-Մելիքովի հեռացումից հետո, երբ հայոց առաջադիմության համար ստեղծվել էին համեմատաբար բարենպաստ ներքին պայմաններ և Հայաստանի զգալի տարածքներ միացվել էին կայսրությանը, երբ նպաստավորվում էր հայկական առաջադիմությունը, և երբ Ռուսաստանի իրական շահն էլ պահանջում էր «բարձրացնել ռուսական դրոշին փարած մի ազգ...», այս անգամ էլ Ռուսաստանն է ապրում ներքին քաղաքական հետադիմություն, արտաքին քաղաքական (հերթական) կտրուկ մի շրջադարձ (volte-face):

Եվ Անգլիայի «մտրակի» հարվածների տակ հեռանալով Մերձավոր Արևելքից՝ Ռուսաստանն այժմ ինքն է որդեգրում Օսմանյան կայսրության «ամբողջության դոգմը»: Ճիշտ է, ժամանակավորապես: Այս շրջանում էր, որ հանդես եկավ մի նոր գիշատիչ՝ Կայզերական Գերմանիան, որը աստիճանաբար ամրապնդեց իր դիրքերը Բոսֆորի ափերին, «չեզոքացրեց բոլոր մրցակից ուժերը» և որոշեց «փրկել կայսրության ամբողջությունը»[16]:

Սակայն գալիքում իր վերադարձն ապահովելու և Թուրքիայից նոր պատառներ, թեկուզև հենց Թուրքահայաստանը, պոկելու ակնկալիքով Ռուսաստանին «ձեռնտու էր,- նշում է Վարանդյանը,- պահպանել թուրքահայ գավառներում մշտնջենավոր քաոս, մի հարատև անիշխանական վիճակ, որ կարող էր առիթ լինել շահավետ միջամտությունների»[17]: Ռուս դիվանագիտությունը դարձավ Համիդի «ջերմ բարեկամը», իսկ Հայաստանը և Հայկական հարցը շուտով զգացին լոբանովականության մահաբեր շունչը:

Վարանդյանն «ունայն աղերսանք» էր համարում օսմանյան դժոխքից դեպի Ռուսաստան ուղղված հայոց օգնության հորդորները, քանզի միայն *«նա ինքը գիտե իր գալու ժամանակը»*, քանզի նա *«երբեք չի ազատել մի ժողովուրդ՝ նրա սիրուն աչքերի համար»* (ընդգծումներն իմն են.- Լ. Շ.):

Այնուհետև 1915-ին, երբ դրված էր արևմտա-

13 Տես նույն տեղը, էջ 204:
14 «Հայրենիք», 1928, թիվ 9, էջ 87:
15 Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, հ. 2, էջ 208-209, 194-195:
16 Տե'ս նույն տեղը, էջ 217, 223:
17 Նույն տեղը, էջ 222:

հայության լինել-չլինելու հարցը, հայ կամավորական զորամիավորումներին խրախուսելու փոխարեն, նա «իր առեղծվածային նախանշներով» հնարավորություն տվեց թուրքերին «դատարկելու Հայաստանը»*: Եվ վերջապես, Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում, երբ հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով և անհամար զոհողություններով փորձում էր ստեղծել Միացյալ Հայաստանը, արդեն գործակցելով քաղաքակրթության ոխերիմ թշնամու հետ, ռուսական բոլշևիզմը խորտակեց «Հայ նորածին անկախությունը»:

Ենթադրելի է, որ պատմության ընթացքը այլ կլիներ, և Ռուսաստանի ճակատագիրն ու հայոց արյունոտ իրականությունը այլ ուղղություն կստանային, եթե «Ռուսաստանի գլուխ կանգներ Սահմանադիր ժողովից ընտրվելիք օրինավոր սոցիալիստ ու դեմոկրատ կառավարությունը»: Երբ Արևմտահայաստանը, թեև ավերված ու կիսադատարկ, մինչև Երզնկա գրավված էր ռուս զորքի և հայ կամավորական խմբերի կողմից, Կերենսկու ժամանակավոր կառավարության կողմից «հռչակված էր ինքնավար» և գտնվում էր հայ փոխկառավարչապետ Հ. Զավրիևի հսկողության տակ, իսկ Կովկասյան Հայաստանը դեռ «լեցուն էր հայերով»: Սակայն այլ ընթացք ստացավ իրադարձությունների հետագա զարգացումը:

Հարվածի հիմնական ուղղությունը դիտելով արևմտյան քաղաքակրթության դեմ պայքարը, ռուսի և «սոցիալիստական հեղափոխության ռեզերվն ու հենակետը Արևելքում, մահմեդական աշխարհում» փնտրող բոլշևիզմը սկսեց համագործակցել դարավոր ախոյանի՝ թուրքաց աշխարհի հետ: Լույս աշխարհ եկավ լենինյան «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» (20.11.1917 թ.) ուղղված ռազմավարական փաստաթուղթը, որտեղ ասվում էր. «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման և նրանից Հայաստանը խլելու մասին եղած դաշնագիրը պատռված է ու ոչնչացված»: (Ահա այսպես, կարճ ու հստակ):

Ռուսի և ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» (29.12.1917 թ.) հրամանագրի խոստումները ամբողջական հարցը միակողմանի ու ածանցյալ շտրիխով սահմանափակելու, բացառապես հայոց համար նախատեսված մտացածին պատրանքները շահարկելու փորձ են, թերևս ցեղասպանության ենթարկված մի ժողովրդի մեջ անհիմն մի տեսակետ սնուցելու նկատառում: Իսկ մեր օրերում առնվազն զավեշտական է: Հետևապես, քննվող խնդրի համատեքստում «Թուրքահայաստանի մասին» դեկրետը կարող է դիտվել միայն որպես դիվանագիտական խարդավանք, Թուրքիային բոլշևիզմի հետ սերտ հարաբերություններ մղելու և երկրաքաղաքական իրադրության արմատական փոփոխության միջոց, ինչը իրականացվեց աստիճանաբար:

Իրավացի է Վարանդյանը, երբ նկատում է. «Բրեստ-Լիտովսկի օրերից ի վեր բոլշևիկյան Կոմիսերները *սիստեմաբար զոհաբերել է* Հայկական Դատը, նա ձգտել է դեպի Արևելք, որտեղ հանելու մահմեդական աշխարհը բրիտանական կապիտալիզմի դեմ և քայլել է իր ճամբուն ընկած հայ ժողովրդի խոցոտված մարմնի վրայից, քայլել է պաղ անտարբերությամբ, անգթորեն կոխկրտելով»[18]:

Եվ եթե Բրեստ-Լիտովսկը եղավ բոլշևիկյան volte-face-ի մեկնակետը, ապա Կարմիր բանակի ջախջախիչ պարտությունը Եվրոպայի դարպասների առաջ, Վարշավայի պատերի տակ 1920-ի աշնանը՝ նրա վերջին արարը: Վերջնականապես խորտակվեց կարմիր ցնորքը՝ «վառել Եվրոպան», շղթայազերծել «համաշխարհային հեղափոխությունը»:

Մահմեդական Արևելքի հետ ռազմավարական դաշինքը այսուհետև շուրջ յոթ տասնամյակ դարձավ Կարմիր Ռուսաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարը: «Թուրքիան Արևելքի մեջ,- գրում է Բ. Բորյանը,- անհրաժեշտ էր Ռուսաստանին՝ ընդդեմ Արևմտյան աշխարհակալության»[19]:

Նույն թվականի սեպտեմբերին, զուգահեռա-

* Հիշատակելով Ռուսաստանի այս կարճատև քաղաքականությունը, Ե. Վ. Տառլեն գրում է. «1915-1917 թվականներին հայերի ոչնչացումը ռազմավարորեն վերաբերում էր ոչ այնքան Անգլիային, որքան Ռուսաստանին, որը ապագայում Թուրքիայի հյուսիսում կորցնում է մի որոշ հենակետ» (Тарле Е. В., Политика: История территориальных захватов. XV-XX века: Сочинения. М., 2001, с. 646):

18 Տե՛ս «Հայրենիք», 1926, թիվ 3, էջ 106:

19 Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, М., 1929, ч. II, с. 285.

բար, Բաքվում գումարվեց Արևելքի ժողովուրդների (առաջին և վերջին) համագումարը, Էնվերի և, դժբախտաբար, 152 հայազգի բոլշևիկների մասնակցությամբ, որտեղ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց հետադեմ և համաշխարհային աշխարհակալության գործակալ: Եվ «ի՞նչ Մոլթկե և ի՞նչ Թալեյրան կարող էր փրկել մեր երկիրը երկգլխանի վամպիրի ճիրաններից,- դիմում է Լեոյին (և ոչ միայն նրան) Վարանդյանը,- ռուսթուրքական դաշնակցության փորած անդունդից... Իսկ նա փորված էր դեռ Տրապիզոնի համաձայնությամբ»[20]:

Եվ այսպես. եթե հայ ժողովուրդը եղավ «ամենամեծ զոհն» անգլո-ռուս «անիծակուռ հակամարտության», եթե «հայ հեղափոխական շարժումը գալարվեց նրա պողպատյա օղակների մեջ և դեռ նոր փթթված՝ ուժասպառվեց»[21], ապա «չկար, որովհետև Օսմանյան կայսրությունը կարողացավ դարերով երկարել իր *հոգեվարքը*, հակառակ եվրոպական ամենեն մեծ ու հզոր պետությանց ընչաքաղցությանց, ահազոր թշնամությանց, կրկնակի հարձակումներին և հաղթանակներին:

Ինչո՞ւ: Տերերին պահպանող այդ ուժը մի փոքր տարազ էր՝ ուժերի հավասարակշռություն»[22]:

***Հ. Գ.** - Այսուհանդերձ, անհրաժեշտ է ընդունել, որ ժամանակի գիտաքաղաքական միտքն ու ազգային ընտրանին, ինչպես ցույց է տալիս Հայաստանի ազատագրության դժվարին ու ողբերգական ընթացքը, «ուժի հավասարակշռության եվրոպական համակարգի» մութ ծալքերում, մինչև Մեծ եղեռն չկարողացավ գնահատել Օսմանյան կայսրության իրական տեղն ու արժեքը ժամանակի ռազմավարական աշխարհի կառուցվածքի մեջ և նրա համար:*

*Հանդես գալով մշակութային- քաղաքակրթական չափորոշիչներից և գաղափարախոսական դիրքորոշումներից, այն չըմբռնեց, որ Համանվագի երկրների կողմից Օսմանյան կայսրությունը դիտվում էր «եվրոպական խոշոր տերություն», որ «անձեռնմխելիությունն այն բանի, ինչը մնում է Օսմանյան կայսրությունից, դա սկզբունքներից մեկն է, որոնց վրա հիմնվում է ուժերի հավասարակշռությունն ու խաղաղությունը Եվրոպայում»*

*(Իտալիայի վարչապետ Ջիոլետտի, 1911 թ. ապրիլ)*

*(Джолл Д., Истоки Первой мировой войны. Пер. с англ., Ростов на Дону, 1998, с. 324):*

20 «Հայրենիք», 1926, թիվ 3, էջ 104:
21 Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, հ. 2, էջ 190:
22 Հյուսեյն Ջահիդ (Յալչըն) (թուրք լրագրող).- Տե՛ս Նավասարդյան Վ., Նեղուցները (Վոսփոր և Դարդանել): Թրքական ջրուղիները և Հայ Դատը, Կահիրե, 1947, էջ 251-252:

# ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՏՐԵԱԼ ԱԶԱՏԱՐԱՐՆ ՈՒ ՁՈՒՀԸ

Աշոտ Պետրոսեան

Արագածի արեւահայեաց լանջին բազմած է Դըղեր (Տեղեր) գիւղը: Սուրբ Աստուածածին եկեղեցին սէգ արծուի նման երեւում է շատ հեռուներից եւ մարդկանց միտքն ու հոգին կենտրոնացնում Դըղերի վրայ: Պետոյի մանկութիւնն անցել է եկեղեցու շուքի տակ: Եղբայրը՝ Գագիկն ինձ պատմել է Պետոյի մասին դեռեւս նրա կենդանութեան օրերին: Պետօն ազատագրական պայքարին հոգեբանօրէն պատրաստ է եղել 88-ից շատ առաջ: Նրանց ընտանիքում խօսել են ամէն ինչի մասին: Մինչեւ 88-ը ազգային թեմաներով շատ զրոյցներ են եղել: Նրանց ազգատոհմը կորուստներ է ունեցել դեռեւս 19-րդ դարում: *«Մենք արմատներով Վանի վիլայեթի Մոկս գաւառի Գոմեր գիւղից ենք: Մեր ընտանիքը տեղափոխուել է Դղեր կամ Տեղեր գիւղը: Պետօն տեսել է այն գնդակների հետքերը, որոնք Դղերի եկեղեցու վրայ են թափուել 18-20-րդ դարերում: Վտանգի պահերին*



*Պետօն*

*մարդիկ պատսպարուել են եկեղեցում: Թշնամիք ուզեցել են այրել եկեղեցին, բայց չեն կարողացել: Այդ բոլորի մասին շատ է խօսուել եւ ամէնը տպաւորուել է Պետոյի մէջ: Եւ Դաշնակցութեան գաղափարները շատ պիտի չքարոզուէին, որպէսզի Պետօն տպաւորուէր դրանցով: Եւ պատահական չէ, որ Կարօտի հետ միասին մտել են Կուսակցութեան մէջ»:*

Պետօն Պռոշեանում ստեղծուած առաջին ջոկատի առաջին անդամներից էր եւ երբ հայ երիտասարդ մարտիկները գրոհով մտան առաջին թուրքաբնակ գիւղը, նրանց մէջ էր Պետօն՝ Կարօտի հետ միասին:

94-ի սկզբին Հորադիզի հարթավայրում Արթուր Աղաբեկեանը կարգադրութիւն արեց, որ պահի դրութեամբ բոլոր հրամանատարները աշխատելու են Պետոյի ձայնակապային կարգահամարով: Փաստօրէն Պետօն այդ ընթացքում ռազմաճակատի փաստական հրամանատարն էր, զօրավարը: Մինչեւ այդ պահը, չարքաշ դաշնակցական Պետօն Կարօտի եւ Հրաչի հետ երկար ճանապարհ են անցել եւ իբրեւ քաջամարտիկ նուիրեալ դաշնակցականներ յայտնի են դարձել վաղուց:

Կարօտի դաշնակցական խումբը, որը միաւորում էր Պռոշեանի եւ էլի մի շարք վայրերի դաշնակցական երիտասարդներին, Շահէն Մեղրեանի



սիրելի ջոկատն էր եւ նա միշտ իրենց կարիքն ու անհրաժեշտութիւնը զգում էր: Կարօտը հրամանատարն էր այն ջոկատի, որ պիտի Գետաշէնն ազատագրէր:

Պետօն դպրոցական տարիներից լաւ մարզիկի համբաւ ունէր, Հայաստանի երիտասարդների ախոյեան էր եղել: 90 թուականին Պռոշեանի ջոկատի հրամանատարը Կարօտն էր: Գնացին Նոյեմբերեան: Նոյեմբերեանում ի յայտ եկաւ Պետոյի մարտունակութիւնը, իր զօրական լինելը: Ինքը չէր ցոյց տալիս, դա զգացւում էր, եւ բոլորն էին զգում: Վարդգէսի վկայութեամբ, որպէս քաղդեկ՝ նրանց հետ էր նաեւ Ալիկ Պետրոսեանը: Ինչ որ պահանջւում էր՝ այնտեղ կատարեցին եւ ջոկատը պիտի ետ գար տուն: Ալիկ Պետրոսեանը միաժամանակ մնալու էր Նոյեմբերեանում: Ալիկը Պետոյի, որպէս մասնագէտի, կարիքը շատ էր զգում եւ նրան որոշ ժամանակ պահեց իր մօտ, իսկ միւսները վերադարձան Պռոշեան: Դրանից յետոյ բոլորը միասին ընդունեցին ՀՅԴ շարքերը: Մի խմբի անդամ էին: Ժողովներն անց էին կացնում Պետոյենց տանը, նրա սենեակում, որտեղ ինքն էր ծնուել: Խմբապետը Կարօտն էր: Պետօն օրաւուր աւելի էր կատարելագործւում ռազմագիտութեան ասպարէզում: Կազմակերպութեան մէջ Պետօն օրինակ էր ցոյց տալիս: Նա միշտ ամէն ինչ նախ իր վրայ էր կիրառում, յետոյ արդէն նոյնիսկ պարտադրում էր:

Այնուհետեւ Պետօն, Կարօտը, Հրաչը տեղափոխուեցին Շահումեան եւ այնտեղ դպրոցում դասեր էին տալիս, ռազմագիտութիւն էին սովորեցնում, շրջում էին բնակավայրերում: Արդէն բոլորը գիտէին, որ Պետօն Պետօ է՝ արժանաւոր զօրական, խստապահանջ ու կարգապահ:

Պռոշեանի ջոկատը մասնակցեց Մալիբեյլիի գրաւմանը: Այդ գործողութեան ժամանակ Պետօն վիրաւորուեց առաջին անգամ, բայց շուտ ապաքինուեց:

Գետաշէնում եւ Մարտունաշէնում իրավիճակը ծանրանում էր: Կարօտի 9 հոգիանոց ջոկատն ուղարկուեց Մարտունաշէն՝ «Արաբոյին» օգնելու համար: Բոլորը միասին 28 հոգի էին: Առաւօտեան ժամը 6-ին խորհրդային հզօր բանակը թուրքերի հետ միասին գրոհեց գիւղի վրայ: Հայ մարտիկները դիմակայեցին այդ լաւային մինչեւ կէսօր: Իրենց հետեւակի ձախողուած գրոհից յետոյ ահռելի տեխնիկան հեռուից սկսեց գիւղի հրետակոծումը: Հետագայ դիմադրութիւնը կործանարար կը լինէր Մարտունաշէնի բնակչութեան համար եւ ստիպուած կազմակերպուած եւ անվնաս նահանջեցին: Մինչ այդ զոհուել էին հրամանատար Սիմօն Աչիգէօզեանը եւ տեղաբնակ Խաչատուր Դաւթեանը: Ծանր վիրաւորուել էր Մկրտիչ Մկրտչեանը, ում Գետաշէնով տեղափոխեցին Շահումեան: Պետոյի փայլուն անհատականութիւնն ի յայտ եկաւ Մարտունաշէնի կռւում: Այդ ժամանակ նա էլ վիրաւորուեց գլխից:

**Թորոս**.- 91-ին Պետոյի հետ ծանօթացանք Շահումեանում: Ինքն էր, Բաղրամեանի 5 հոգիանոց խումբն էր, Պռոշեանի, Հրազդանի խմբերն էին: Պետօն մեր մէջ, իրաւ, աչքի էր ընկնում: Ինքը եւ Կարօտը: Ես իրենից շատ խորհուրդներ եմ ընդունել՝ թէ մարտական, թէ



մասնագիտական, մարդկային, կենցաղային եւ այլն: Նա մեզ օգնում էր իր ըմբռնողութեամբ, իմացութեամբ: Միայն մէկ օրինակ. մարտական կիսաբաճկոնների հարցն եմ յիշում: Էն ժամանակ ո՞վ գաղափար ունէր դրանից, ո՞վ էր մտածում մարտաբաճկոն հագնել, գնալ մարտի: Պահունակները գըրպաններս էինք դնում եւ գնում: Պետօն առաջինն այն կիրառեց, չնայած Արարատն էլ մեզ հետ էր, Աֆղանստանի քուրան անցած, ծառայած մարդ: Էդ մարտաբաճկոնները կային, բայց չէինք հագնում: Պետօն մեզ սովորեցրեց եւ սովորոյթ դարձաւ հագնելը: 91-ին մեր խմբով՝ բոլորս հագնում էինք: Պետօն օրինակ էր ցոյց տալիս: Նա կարում, պատրաստում էր, կազմ ու պատրաստ հագնում, եւ մենք իրենից սովորում էինք:

**Կարօտն ու Պետօն**

Կարօտն ու Պետօն կարծես նոյն արմատի երկու ճիւղեր լինէին: Նրանց խառնուածքն ու հոգեբանութիւնը տարբեր էին, բայց ոգին նոյնն էր: Ազատագրական պատերազմը միայն յաղթանակների անխաթար շարք չէ. լինում են նաեւ ծանր պարտութիւններ: Այդպիսիներից էր Շահումեանի ողբերգութիւնը: Կարօտի կորստեամբ աւարտուեց պատերազմի ֆիդայական շրջանը: Շահումեանի հայութիւնը հողազրկուեց եւ տարագրուեց եւ զոհեր եղան, որոնց մէջ ամենացաւալին Կարօտն էր: Կարօտի կորուստը սակայն կրաւորական մարտիրոսութիւն չէր, այլ մի քայլ, որ արտաքուստ հակասում էր Շահումեանի հրամանատարութեան մարտավարութեանը՝ ստեղծուած պայմաններում փրկել ժողովրդին. դիմադրել այնքան, որպէսզի ազգաբնակչութիւնը դուրս գայ շրջանից, եւ՝ առանց խուճապի դուրս բերել նաեւ զօրքը: Նման պայմաններում դա միակ խելացի, բանական որոշումն էր. հողը կարելի է ետ գրաւել, իսկ ազգաբնակչութեան կորուստն անդառնալի է: Կարօտը ոչ միայն Շահումեանում աչքի ընկած հրամանատար էր, ազգի սիրելի երիտասարդ, այլեւ Պռոշեանում Երգրի ոգին եւ պայծառութիւնն արտայայտող ֆիդայի: Նա պռոշեանցիների առջեւ հանդիսաւոր ուխտ էր արել՝ ետ չվերադառնալ առանց Գետաշէնը վերցնելու:

Ի միտ ունենալով Կարօտի մարտավարական եւ մարդկային կարողութիւնները՝ Շահէն Մեղրեանը նրան կարգել էր Գետաշէնի ազատագրութեան համար յատկացուած գրոհային խմբի հրամանատար: Պետօն փոխհրամանատարն էր: Նրանք նախօրէին հետախուզութիւններ էին արել եւ պատրաստւում էին առաւօտեան գրոհելու Գետաշէնը: Կարօտը գիշերը մնացել էր Շահումեան աւանում, շտաբում՝ վերջին հրահանգներն ընդունելու համար: Կարօտի վերջին ժամերին Մկրտիչ Մկրտչեանը (Երգիչ Մակիչ) եղել է նրա հետ. *«Կարօտի եւ Ապարանցի Գագոյի հետ ՈւԱԶով գալիս էինք շրջկենտրոնից Բուզլուխ: Վաղ առաւօտեան մարտն սկսուել էր հետեւակի, ապա տեխնիկայի տեղաշարժով: Մենք այդ ժամանակ գիւղից սկսեցինք բարձրանալ դէպի վեր: Շահումեանցի տղաներն ի հարկէ մեզ օգնեցին, «Վիլիս»-ով բարձրացանք լանջը, որտեղից պիտի ոտքով բարձրանայինք: Ժամը 11-ը կը լինէր: Ահագին երկար ճանապարհ է: Գիւղի հակառակ երեսն էինք գնում, դէպի թուրքերը, ուր մեր դիրքերն էին: Կարօտն էր, Գագօն, ես: Բարձրացանք, լաւ յիշում եմ, «Իգլա» կար մեզ հետ եւ երկու զինկ: Մենք ուսապարկերը տուեցինք Գագոյին, զինկերը վերցրինք, մնաց «Իգլա»-ն, որ ներքեւի տղաները պիտի բերէին:*

*Մի քանի պահակակէտեր էին: Կապի բացակայութեան*

պատճառով չգիտէինք որտե՛ղ ի՛նչ է կատարւում: Փասըօրէն կողերից էլ խփում էին, որովհետեւ արդէն պահակակէտերը գրաւուած էին: Թուրքերը յամառ դիմադրութեան են հանդիպել, սակայն տեխնիկայով գրոհել են, եկել են, խրամատները ռռնակահարել եւ ճեղքել: Սփիւռւած նահանջ է եղել: Ազնւութիւնը պահանջում է պատմել այն, ինչ որ եղել է: Մենք բարձրանում էինք եւ տեսանք իջնող տղաների, որոնք ասում էին, թէ տեխնիկան լրիւ մօտեցել է, նոյնիսկ ռռնակներով են խփել իրենց դիրքերին: Բոլորն անտրամադիր էին: Կարօտն ասաց, որ պիտի դիրքերը ետ վերցնենք, պիտի նորից բարձրանանք դիրքերը: Նա ինձ ասաց.

- Մկո՛, դուք տղաների հետ բարձրացէ՛ք վերեւ, ես Երզընկայի տղաների հետ անցնեմ միւս կողմով, բարձրանանք վերեւ:

Սկսեցինք բարձրանալ: Մեր կազմակերպականի մասին կարող եմ ասել, որ մենք այն ժամանակ թոյլ էինք որպէս մարտիկներ, կռւող, կազմակերպուած զինուոր, որովհետեւ պատերազմի այդ տեսակ փուլ չէինք տեսել, չէինք անցել: Միանգամից եղաւ ամեն ինչ եւ այդչափ տեխնիկա..., էդ տեսակ կազմակերպուածութիւն: Տարբեր թուեր են ասում Շահումեանի վրայ եկած տեխնիկայի մասին, սակայն այն ժամանակ Շահումեանի ճակատը մեծ չէր, այն պարազային, երբ ամբողջ Շահումեանն ունէր 6 տեխնիկա, որից 2-ն էին աշխատում:

Հաշուարկն, ուժեմն, պարզ է: Մեր հոգեբանական վիճակի վրայ անդրադարձաւ այն հանգամանքը, որ այդ տեսակ մեծ պատերազմ չէինք տեսած:

Երբ Կարօտը բարձրացաւ տղաներին վերցնելու, մենք բարձրացանք իր ասած ճանապարհով ու հանդիպեցինք այն տղաներին, որոնց հետ Կարօտը պիտի գրոհէր: Դրանք երգնկացիներն էին: Ասացին. «Որքան էլ Կարօտին համոզեցինք, որ անհնար է, թուրքերն արդէն դիրքերի վրայ են (եւ իրօք տեսանելի էր, որ դիրքերի վրայ մարդիկ են շարժւում), սարալանջը բարձր է բաւականին եւ պիտի բաց տարածքով շարժուենք դէպի թուրքերը եւ տեսանելի ես նոյնիսկ պառկած վիճակում, չհամոզուեց»:

Սակայն Կարօտը բարձրացել է մի քիչ այլ տեղով, թեքութեամբ է գնացել: Ասաց. «Մի հատ նայեմ այս ուղղութեամբ, տեսնեմ ինչ կայ»:

Այդ մատնացոյց արած ուղղութեամբ մենք եւ Երգնկայի տղաները գնացինք: Գնդացրի փամփուշտներն էլ սպառուած էին: Իջանք անտառի եզրագծով, որտեղից անտառն էր սկսւում: Կարծում էինք այդտեղ կարելի էր գտնել: Երբ թուրքերն սկսեցին աշխատել, հասկացանք, որ անհնարին է գտնել: Տղաներն իջան, որովհետեւ այլեւս անելու բան չկար այնտեղ: Ես շարժուել եմ այն անտառի վերջաւորութեամբ, ուր ասել էին, թէ Կարօտն է գնացել: Յետոյ՝ այնտեղ մի ջրակ կար, ուր 27-րդ պահակակէտն էր, ուր ալավերդցիներն էին: Այնտեղ էլ արդէն դիրքերի վրայ մերոնցից չկային: Արդէն բոլոր պահակակէտերից իջել էին եւ պաշտպանում էին գիւղը: Որովհետեւ եթէ այն ոյժով, որով յարձակուել էին, մտնէին գիւղ, ճակատագրական կը լինէր Վերի Շէնի համար, որն ամենամեծ բնակչութիւն ունեցողն էր: Մինչեւ մութն ընկնելը ժամանակ էր պէտք շահել, որպէսզի ժողովուրդը դուրս գար, իսկ առաւօտեան գիւղի մօտ դիրքեր դնէինք, տեսնէինք ինչ է լինում: Պայմանաւորուածու-



թեամբ՝ բոլորն իջել են: Ետ դարձայ եւ մինչեւ գիշեր սպասում էի, որ գան: Այդ ժամանակ Հրաչն ու Պետօն էլ չկային: Բոլոր դիրքերից արդէն դուրս էին եկել եւ Վերի Շէնում պիտի դիրքաւորուէին: Նախօրօք Վերի Շէնի բնակչութեանն ասել էին, որ դուրս գան: Երբ մենք գնացինք, բոլորն այնտեղ էին եւ բնակչութիւնը պիտի դուրս գար»:

**Հրաչ Մուրադեան.** «92-ին երբ դուրս եկանք, յունիսի 13-ն էր: Քնած էինք: հերթապահը արթնացրեց: Ասում էին, թէ ինչ-որ դիրքերից մեզ վրայ ուժեր են շարժւում: Պետօն ինձ արթնացրեց, ասաց, որ յարձակում կայ: Չգիտեմ ինչպէս՝ նա արդէն գիտէր, որ մեծ յարձակում կայ:

- Դու գնա՛, զէտաշէնցիներին ձայն տու՛ր, ես կը գամ:

Մեր դիրքերը ռմբակոծում էին: Բուզլուխում էինք, բարձրացանք վերեւ եւ դիրքաւորուեցինք: Պետօն ու Վարդգէսն էին: Ես չախում էի եւ տեսնում էի, թէ մեր տղաների վրայ ինչպէս են աշխատում: Պետոյին ձայն տուեցի, որ դիրքը փոխի, սակայն Պետօն գլուխը չէր բարձրացնում: Զգում էի, որ այլ դիրքերից մեզ բան էին ուզում հասկացնել: Յետոյ տեսանք, որ մեզանից վեր տեխնիկա կայ: Ամենից ուշ Պետօն թողեց դիրքը: Յետոյ տեսանք, թէ ինչպէս Պետօն ընկաւ, զէնքը թռաւ ձեռքից: Սակայն նա մի շատ ճարպիկ թռիչք գործեց, վերցրեց զէնքը եւ շարունակեց: Յետոյ իմացանք, որ ձեռքից վիրաւորուել է:

Դիրքից իջանք դէպի անտառ, այնուհետեւ բացուեց մեծ անդունդ: Մտածեցի գցուել, սակայն շատ բարձր էր: Մի քիչ բարձրացայ, ձայն տուեցի: Պետօն կանչեց.

- Այստեղ ենք, դո՛ւրս եկէք՝ գնանք:

- Չե՛նք կարող վերեւ բարձրանալ:

Մի քանի թուրք զինուորով զրահամեքենան դէպի ինձ էր գալիս: Ես կրակում էի թուրքերի վրայ, սակայն նրանք չէին պատասխանում: Զրահամեքենան դուրս եկաւ անդունդի ծայրը: Տղաներն ասացին.

- Արի՛, ճանապարհ կայ:

Երբ իջնում էի, հեռուից տեսայ Կարօտին: Նա ասում էր.

- Տղե՛րք, ինչ էլ լինի, պիտի դիրքերը ետ վերցնենք:

Ես էլ տղաներին ձայնեցի, ասացի.

- Վարդգէսն ու Պետօն մի տեղ լռուել են, չեն կարողանում բարձրանալ:

Գնացի, որ իրենց հասնեմ: Ինձ միացան Ազատն ու Պողոսեանցի Արմէնը: Ձախ թեւով եղանք բարձունք եւ մեր մեքենաների փոկերը քանդեցինք: Ազատին ու Արմէնին ասացի.

- Դուք սպասէ՛ք, ես բարձրանում եմ:

Բարձրանալիս նրանք պիտի ինձ հրափակէին, որպէսզի չխփուէի: Մի խօսքով՝ բարձրացայ այն տեղը, ուր բաց տարածք էր, մինչեւ անտառ՝ 30 մետր եւ անտառից էլ մի 10 մետր անդին՝ դիրքերում Պետոյենք են: Թուրքերի զրահամեքենան այդտեղ էր եւ չկարողացայ անցնել: Ետ դարձանք ժայռի մօտ, սկսեցինք գոռալ՝ Պետօ՜, Վարդգէ՜ս: Մտածեցինք, որ ժայռի տակից չեն տեսնի, եթէ այնտեղ են, ինչ-որ կերպ զգալ կը տան եւ գիշերը կը հանենք: Երբ ի վերջոյ հանդիպեցինք, ասացին, որ իրենց գլխավերեւը թուրքեր են եղել, չեն կարողացել դուրս գալ: Ինչ թուաց, թէ դուրս են եկել, սակայն մնացել էին: Պետօն ամբողջ գիշերը վիրաւոր ձեռքով սանդուղքներ է քանդել, գիշերուայ 3-ին դուրս են եկել ինքն ու Վարդգէսը եւ գիշերը հասել են Գիւլիստան:

Այդ ժամանակ հրամանատարը Կարօտն էր: Կարօտենք բարձրացել են դիրքերը, վերջին մարդը, որ Կարօտին տեսել է, մեր գիւղացի Մուշեղն էր, որ վիրաւորուել էր այդ ժամանակ: Նա է տեսել Կարօտին: Բարձրացել են, եւ իրենց վրայ թուրքի տեխնիկան է եկել: Մուշեղի պատմածով՝ Կարօտն ասել է. «Մուշե՛ղ, անհնար է, որ այս դիրքերը ետ վերցնենք, իջնե՛նք: Սկսել են ետ քաշուել: Թուրքերի գնդացրային կրակից Մուշեղը վիրաւորուել է ոտքից եւ փորից: Երկուսի միջեւ մի փոքր բլուր է եղել ծածկող, իրար չէին տեսնում: Մուշեղը լսում է Կարօտի ձայնը, որ կրակում էր գնդացրից: Նոյնիսկ տեսել է նրան նահանջելիս, որ ցատկապտոյտներով նահանջում էր՝ ճիշտ ձեւով էր նահանջում:

Դրանից յետոյ որեւէ տեղեկութիւն չունենք: Դրանից յետոյ Մակիչը բարձրացել է այդ տարածքը, որտեղ Կարօտը պիտի լինէր: Ձայն է տուել, պատասխան չի եղել: Անյայտ կորել է: Երկու տարբերակ կարող է լինել. կա՛մ սպանուել է, կա՛մ գերի է ընկել: Կարօտն, անկասկած, եթէ հնարաւորութիւն ունենար՝ երբեք չէր յանձնուի: Սակայն կայ իրավիճակ, երբ բոլորովին անհնար է լի-

*նում զէնք գործածել:*

*Շատ ենք մտածել Կարօյի մասին, խորհել: Տարի ու կէս ման էինք գալիս եւ չէինք կարողանում գտնել: Թուրքերը տեղեկութիւն էին տալիս, թէ իբր կենդանի է, սակայն ապացուցելու պահին՝ փաստեր չկան: Բայց չէին էլ թողնում մոռանանք: Հէնց որ մի փոքր հանգստանում էինք, մէկ էլ ինչ-որ տեղից տեղեկութիւն էին արշակում Կարօյի մասին: Այնուամենայնիւ, յոյս ունեմ, որ Կարօյը կենդանի է»:*

Պատերազմում մեծ մարտիկները արիութեամբ են տանում նաեւ պարտութիւնները: Այս իմաստով ամէն գովեստից վեր է Շահէն Մեղրեանը. նա կարողացաւ իր մէջ ուժեր գտնել եւ շարունակել պայքարը հայդուկային եղանակով: Պետօն, Հրաչը եւ Պռոշեանի ջոկատի միւս մարտիկները կենտրոնացան Մարտակերտի ռազմաճակատում նոր ձեւաւորուած Շուշիի դաշնակցական վաշտի, ապա գումարտակի կազմում:

Շահումեանի ողբերգութիւնից յետոյ ոգեւորուած թշնամին կատաղօրէն շարունակեց յարձակումը Մարտակերտի ուղղութեամբ եւ շուտով զաւթեց Մարտակերտի մեծ մասը: Թաթար-թուրքերը եթէ վերցնէին Սրխաւենդ-Ղազանչի բնագիծը՝ նրանց առաջապահ ուժերը կը կախուէին արդէն Ստեփանակերտի վրայ. այլեւս նպաստաւոր լեռներ չկային, որ պաշտպանէին Արցախի մայրաքաղաքը: Ահա այդ ճակատագրական պահին Շուշիի առանձնակի գումարտակը սա-



Պետօն

կաւաթիւ մարտիկներ ունեցող այլ զօրամասերի հետ կարողացաւ նախ կանգնեցնել թշնամուն եւ ապա հակայարձակման անցնել: Եւ չնայած գումարտակը փառաւոր մեծաթիւ մարտեր է վարել, հասել նշանակալից յաղթանակների, գումարտակի հրամանատարները Սրխաւենդ - Ղազանչի - Կիչան գծի պաշտպանութիւնը համարում են իրենց զօրամասի կարեւոր ներդրումը Արցախեան պատերազմի ընթացքում:

Զօրամասը կազմաւորուելուց յետոյ Ժիրօն եւ Պետօն պարբերաբար փոխարինում էին մէկը միւսին:

**Մարտակերտի գումարտակի հրամանատար Իլիչ.** «Պետօն ու ես 90-91-ից էինք իրար ճանաչում, Շահումեանից: Որից յետոյ եղել ենք Մարտակերտում:

Պետօն առհասարակ ուրիշ տղայ էր: Նրա գաղափարը, ազգի իր ըմբռնումն ու նուիրուածութիւնը շա՜տ-շատ բարձր էր: Նա ամէն ինչ թողած՝ մտածում էր, թէ ինչ-պէս կարելի է մէկ մետր հող վերցնել, ինչպէս կարելի է առաջխաղացում ունենալ առանց զոհերի կամ նուազագոյն զոհերով: Գիշեր-ցերեկ այդ մարդը քուն, դադար չունէր. միշտ իրեն չխնայելով գործում էր, աշխատում, դրանից յետոյ էլ՝ հերթապահութիւն անում:

Պետոյի նման մարդիկ դարը մէկ անգամ են ծնւում: Ողջ բեռը, ծանրութիւնը, հոգսը վերցնում էր իր վրայ, եւ այնպէս թեթեւօրէն, ասես ոչինչ է վերցրել: Նրա ոգին, մարտերի ժամանակ տղաներին ոգեշնչելը միանգամայն առանձնայատուկ բնոյթ էր կրում: Պետօն կարողանում էր տղաների հետ այնպէս խօսել, հարցերը լուսաբանել, որ թւում էր, թէ անհնար ու խճճուած կամ անորոշ բան այլեւս չկայ, ամէն ինչ յստակ է եւ կարող ենք թուրքերին ետ մղել մեր ուզածի չափ:

Պետոյի հետ շատ գործողութիւններ ենք կատարել. Չլդր-

րան, Բաշգիւնափայա, Ջանյաթաղ, Ջանյաթաղի բարձունքներ… Կիչան-Սրխաւենդ գծում ես պահում էի Ստեփանակերտ տանող ճանապարհը: Երկու ճանապարհները ես էի պահում իմ գումարտակով, ինձանից էլ աջ, մինչեւ Ղազանչի գիւղի մերձակայքը պահում էր Ժիրոյի գումարտակը՝ Պետոյի գլխաւորութեամբ: Մօտ 8 ամիս շարունակ պահել ենք այդ դիրքերը: Ամենակարեւորը՝ մինչ այդ ինչքան դիրքեր որ տուել ենք, Կիչանը՝ որ պահեցինք, այս երկու գումարտակներով այլեւս ետ չենք նահանջել: Եղել ենք նոյնիսկ կիսաշրջափակման մէջ, բայց միասին կարողացել ենք պահել»:

**Դիալեկտիկա եւ իմաստութիւն**

Պատերազմի աւարտից անցել է 15 տարի, սակայն Պետօն շարունակում է մնալ իբրեւ Հայի եւ դաշնակցականի կատարեալ կերպար:

Բախտ եմ ունեցել ճանաչելու Պետոյին, շփուելու գումարտակի սիրելի փոխհրամանատարի հետ: Այդ օրերին Ժիրօն բացակայում էր: Չգիտեմ ինչո՞ւ էին մարդիկ այդքան մեծարում Պետոյին, սակայն մի անգամ, Կարախանբեկ գիւղում երբ զրուցում էինք, եւ այդ պահին խօսում էր ինքը, մի անասելի փոփոխութիւն զգացի հոգուս մէջ եւ վճռեցի, որ այսուհետեւ լինելու եմ Արցախում: Մինչ այդ՝ ննջեցեալներից կամ ողջերից ոչ մէկը ինձ վրայ չի ունեցել այդպիսի զգալի ներգործութիւն:

Պետոյի ներկայութիւնը գումարտակում փոխում էր ամենքին, բոլորն իրենց լաւ էին զգում եւ ինքն անընդհատ շարժման մէջ էր: Սակայն շարժուողը կարծես մարմնաւորեալ մարդ չէր, այլ ոգի:

Նախկինում իրեն հանդիպել եմ «Ազատամարտի» խմբագրատանը, էլի շարժման մէջ էր, սակայն այնժամ նա արտակարգ տպաւորութիւն չթողեց, ընդհակառակը, իր ներկայութիւնը զգացնել չէր տալիս, մի տեսակ ուզում էր ազատ լինել պատահական առընչութիւններից: Իսկ այստեղ՝ Ֆիզուլիում Պետոյի արտաքինն էլ շատ տպաւորիչ էր. խոր ընկած աչքերի վրայ իրար էին խառնուել կամար հօնքերը եւ հայեացքն էլ միշտ կենտրոնացած էր, բայց ոչ ծակող. այդ հայեացքն աւելի շատ ներս էր ուղղուած: Դէմքից զգացւում էր գործնական, մտածող եւ վճռական մարդը:

Մի անգամ զրուցում էի մի ընկերոջ հետ, որը Պետոյին լաւ էր ճանաչում:

- Ճանաչել եմ մարդկանց, որոնք ունեցել են իրենց անհատական հմայքը, իրենց հոգու զօրութիւնը եւ իրենց կատարած գործն էլ նշանակալից է: Սակայն Պետոյի մէջ մի առանձնայատուկ բան եմ նկատել, գրաւչութիւնն այս պարագային հասարակ բառ կը լինի եւ անզօր՝ արտայայտելու Պետոյի հոգու կորովն ու ուժը, նրա անհատականութիւնը: Կարելի՞ է Պետոյի ներգործական ուժը համարել հոգեհմայութիւն, մոգականութիւն: Դու ինչպէ՞ս ես պատկերացնում իր ներգործութիւնն իր հետ շփուողների վրայ, նրա համակրանքի դաշտի ծաւալները, որ ստեղծել էր Հայոց բանակում եւ որն առ այսօր կայ իր անուան շուրջ:

- Այո, դա անժխտելի փաստ է: Պետօն իրականում ունէր այդ ուժը: Իմ վրայ եմ զգացել դա: Ինքս ինձ զինուոր երբեք չեմ պատկերացրել, այսինքն՝ զինուոր դառնալ պատկերացնում էի, բայց զինուորական մնալ, այն էլ այդ օրերին, երբեք չէի պատկերացնում: Բանակում իմ մնալու համար պարտաւորեցնող հանգամանքներ կային. դա առաջին հերթին Պետօն էր եւ իմ ընկերները:



Պետոյի ամէն խօսք կարող էր մարդկանց պարտաւորեցնել դառնալ գումարտակի զինուոր, այսինքն՝ Հայոց բանակի նուիրեալ:

Պետոյի ելոյթից, ճառից յետոյ, ասենք՝ առաւօտեան հաւաքահանդէսից յետոյ, հակաճառութիւն, հակադրութիւն հնարաւոր չէր: Ամէն ոք, ով թէկուզ զինուոր չլինէր, նոյնիսկ հայ չլինէր, Պետոյի խօսքից յետոյ հակաճառելու ոչինչ ունէր: Թէկուզ իր էութեամբ չընդունէր Պետոյին, բայց հակառակ ասելիք չէր գտնում: Չնայած Պետոն շատ բան չէր ասում, բայց ասելու ձեւ կար, ոճ կար, որ մոգական ուժ ունէր իր մէջ: Պետոն ստիպում էր ընկալել իր ասելիքը: Տարիքով իրենից մեծ էի, սակայն նա շուտով ստիպեց մոռանալ տարիքը, մեծութիւնը. ի՞նչ է տարիքը իմաստութեան հանդէպ: Նա ինձ ստիպեց մոռանալ իմ համոզմունքը, որ ես եմ ճիշտը: Այսօր էլ համոզուած չեմ, թէ ով էր ճիշտ՝ Պետո՞ն, թէ ես: Բայց եթէ Պետոն էր ասողը, ես արդէն մտածում էի, որ նա է ճիշտը: Գուցէ դա հէնց այն մոգական ուժի ազդեցութիւնն էր, որ Պետոն ունէր:

- Օգտագործեցինք մոգութիւն բառը, սակայն այն բացասական իմաստ ունի, բացասական երեւոյթ է մեր բարոյականութեան եւ բարեկրթութեան տեսանկիւնից. մոգութեամբ ներգործում են մարդու ուղեղի, սրտի, հոգու վրայ, քրմբեցնում եւ թելադրում են իրենց կամքը, մարդուն զրկում իր եսից, իր ներաշխարհից եւ փաստօրէն ոչնչացնում, վերացնում նրա կամքը: Պետոյի հետ



շփումից լիովին այլ արդիւնք էր ստացւում. նա ոչ թէ դիմացինի կամքը ճնշում էր, այլ արթնացնում, մի տեսակ ոգեշնչում էր նրան եւ մղում մեծագործութեան:

Այո, վերջին տասնամեակներին ի յայտ եկան մի քանի հրամանատարներ, որոնց մարտիկների սէրն իրենց նկատմամբ հասնում էր պաշտամունքի: Պետոն ինքնատիպ էր, առինքնող, համակրանքի դաշտն՝ անսահման:

Մարդկանց նկատմամբ Պետոյի բազմակերպ վերաբերմունքի արգասիքը նրանց մէջ ներզօր ուժերի ու արիական կամքի արթնացումն էր: Նժդեհի նման՝ Պետոն գիւղացի, հասարակ տղաներից գաղափարի զինուորներ եւ քաջամարտիկներ էր քամում: Մարդկանց բարձրացնելը, նրանց արթնացնելը Պետոյի յատկանշական գիծն էր, նրա հոգու նկարագիրը, որ հիացմունք էր առաջ բերում: Նրա անհատականութեան հմայքը բարձրանում էր սքանչելիութեան աստիճան եւ պատահական չէ, որ Պետոն իբրեւ անտարակուսելի մեծութիւն՝ սիրելի էր բոլորին: Այժմ, երբ նա մարմնապէս բացակայում է մեզնից, Պետոյին ճանաչողներն իրենց մխիթարուած են զգում, որ շփուել են նրա հետ, եւ քաղցրութեամբ են յիշում նրան՝ որպէս սրբացուած անուն, որպէս իրենց ընկեր:

Շուշիի առանձնակի գումարտակը հռչակուեց Արցախեան պատերազմում եւ այստեղ վճռորոշը մարդկային գործօնն էր: Պետոյենց գումարտակում ոչ թէ պարզապէս արհեստավարժ, մարտավարժական տեսանկիւնից քաջարի զինուոր էին դաստիարակում, այլեւ մարդ, որը պատերազմն աւարտուելուց յետոյ չարիք չէր դառնայ իր ժողովրդի համար: Եւ անվարան կարող ենք ասել՝ մարդու դաստիարակութեան Պետոյենց դպրոցն այլ բան

չէր, քան Վարդանանց ուխտի շարունակութիւնը եւ զուգրնթաց ու համազօր էր Սփիւռքում գոյութիւն ունեցող դաստիարակութեան հայկական համակարգին: Այդ դպրոցը պատրաստում էր եւ պատրաստում է Մարդ, Հայ, Ազատամարտիկ: Հայերը շարժւում են աշխարհում ամենուր, սակայն այդ համակարգը դարերում անշարժ է ու յաւիտենական: Այն շօշափելիութեան աստիճան պարզ է եւ կատարելութեան իմաստով՝ անսահման: Դա Աստուածաշնչի Հայոց Ոգին է: Եւ այդ ոգին մենք տեսնում ենք Կարօտի, Պետոյի եւ, փառք Աստուծոյ, էլի շատերի մէջ:

Պետոյենց պատրաստած զինուորը եւ մտաւոր կարողութիւն ունէր, եւ գաղափարի զինուոր էր: Պետօն էլ պատկանում էր այդ զինուորաց դասին: Նա ոչ միայն այդ դասին էր պատկանում, այլեւ չարքաշ էր, «սեւ»՝ այսինքն պարզ ու «ցածր» գործերից չխուսափող համեստ մարդ էր: Եւ դա չէր խանգարում, որ նա գլխաւորէր այդ «սեւագործներին»: Որովհետեւ տարրական գործողութիւնների մէջ նա հոգի էր դնում եւ «սեւագործութիւնը», պարզ, նախնական գործողութիւնները, փչացած մեքենայի նորոգումը, անձամբ հետախուզութեան գնալը… պայծառանում էին ազատագրուած հոգու լոյսերով: Եւ պատահական չէ, որ հէնց այդպիսի գործեր անելով էր նա ստեղծում իր փառքը: Սակայն կարեւորը ոչ թէ փառքն էր, այլ պատերազմական իրադրութեան ստեղծած արագափոխ էքստրեմալ վի-



ճակներին դիմանալը, չտկարանալը: Կարօտն այն ժամանակ չտկարացաւ, Պետօն չէր տկարացել, էլի տասնեակ մարտիկներ չտկարացան:

Սամուէլ Սարգսեան (կապաւոր).- Պետօն բոլոր զինուորներին վերաբերւում էր եղբօր պէս: Նա մեզ համար հոգեւոր հայր էր, մի հեղինակութիւն, որն իր մէջ խտացնում էր ամենայարգուած ու բանկագին մարդկանց՝ ծնող, եղբայր, ընկեր յատկանիշները:

Ամենապարզագոյն բանը՝ վառարան վառելը ես սովորել եմ Պետոյից: Նա գործին այնպէս էր վերաբերւում, որ մենք եւս սիրում էինք մեր չսիրած գործը: Մի ամբողջ ուսումնարանում այնքան չեմ սովորել, որքան Պետոյից: Չկար մի ասպարէզ, որից նա չհասկանար, յատկապէս տեխնիկայի գծով: Քանդում-հաւաքում էր նոյնիսկ ճապոնական մագնիտոֆոնները:

Պետօն սովորեցնում էր բոլորին եւ ամէն ինչ՝ զինուորի հասարակ գործերից սկսած մինչեւ մարտավարութեան գաղտնիքները: Գալիս էր Շուշի, կարգաւորում գործերը եւ գնում դիրքերը: Այնտեղ կարգի էր բերում եւ ետ գալիս: Պետօն անընդհատ շարժում էր: Հազար ափսո՜ս, որ այդ անվերջ շարժումը մի օր կարծես կանգ առաւ, թէեւ համոզուած եմ, որ այն ոչ մի րոպէ կանգ չի առնի:

Ի հարկէ, առաւելաբար նա դիրքերում էր լինում եւ ամըսուայ մէջ մի քանի օրով գալիս էր Շուշի: Նա հասարակ էր ու վայելուչ: Ոչ մի տարբերային վիճակ չկար, ոչ էլ եսասիրութեան նշոյլ: Նա իրեն ոչ մէկից չէր գերադասում, որեւէ առաւելութիւն իրեն չէր վերապահում: Եթէ պէտք էր ընտրութիւն կատարել, երկու բաժակներից նա վերցնում էր փոքրը, հասարակը: Երբ գալիս էր մեզ տեսնում քնած՝ ձեռ էր առնում: Եթէ ուզում էր մի բան անել՝ տարբերակ չկար, որ չանէր: 20 տարեկան եմ, Պետոյի նման մարդ չեմ տեսել՝ թէ իր ներունակութեամբ, թէ վարուելակերպով ու շնորհքով:

# Կնոջ դերը Իսրայելի պաշտպանության բանակում

Կարեն Վերանյան



### Կնոջ դերը Իսրայելի հասարակությունում

Իսրայելը դասվում է այն բացառիկ երկրների շարքին, որտեղ կինը, ընտանեկան շրջանակներից զատ, մեծապես ներգրավված է և յուրահատուկ տեղ է զբաղեցնում հասարակության գործունեության տարբեր ասպարեզներում: Բազմիցս են անդրադարձներ եղել Իսրայելի հասարակական, սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական գործընթացներում հրեա կանանց ստանձնած կարևորագույն դերակատարման թեմատիկային, ինչն արմատապես տարբերվում է այլ հասարակություններում կնոջ նկատմամբ ձևավորված ավանդական մոտեցումներից: Իսրայելում և հրեության շրջանում կնոջ բարձր կարգավիճակը մեծապես պայմանավորված է հրեական կրոնա-բարոյական ավանդույթներով: Սիոնիստական շարժման պահպանողական շրջանակներում որոշակի վերապահումներով են մոտենում այն տեսակե-

տին, ըստ որի Աստվածաշունչն իր բնույթով և բովանդակությամբ հայրիշխանական է: Աստվածաշնչյան՝ հիմնականում Հին Կտակարանի պատմություններում, սակայն, խոսվում է այնպիսի կանանց մասին (հիմնականում հրեա), որոնք առանցքային նշակություն են ունեցել մարդկության, իսկ տվյալ դեպքում՝ հրեության գոյապահպանման գործընթացում: Բերվում է նախ և առաջ Սառայի օրինակը, որն անպտղության պատճառով որդի չէր պարգևում Աբրահամին: Աստված խոստացավ սերունդ պարգևել նրանց նաև նրա շնորհիվ, որ փորձությունների ենթարկեց Սառային՝ ստուգելու դժվար պահերին իր ամուսնու հանդեպ նրա նվիրվածությունն ու սերը՝ դրանով իսկ խորապես կարևորելով կնոջ դերը խրայելցիների գոյապահպանման գործում: Հիշատակելի է աստվածաշնչյան մեկ այլ կնոջ՝ Ռեբեկայի կերպարը, որին նույնպես բացահայտվեց Աստծո կամքը: Ռեբեկան առաջին կինն էր, որն Աստծո կամոք որպես ամուսին ընտրեց Իսահակին՝ դեմ գնալով հոր կամքին: Հին Կտակարանում խոսվում է նաև եգիպտական փարավոնի դստեր մասին, որն այդ շրջանում Եգիպտոսում հրեաների հետապնդումների պատճառով մանկահասակ Մովսեսի փրկության նպատակով գաղտնի պահեց նրա հրեական պատկանելիությունը: Աստված որպես Մովսեսի փրկիչ ընտրեց փարավոնի դստերը, որը հանդուրժողականություն ու հարգանք ցուցաբերեց մանկահասակի հավատքի հանդեպ՝ դեմ գնալով իր և իր ժողովրդի դավանած հեթանոսությանը: «Մովսեսի օրենքում», որը նա ստացավ Աստծուց Սինայ լեռան վրա, նույնպես մեծապես արժևորվում էր կնոջ դերը. տղամարդկանց հետ հավասար՝ կանանց իրավունք էր վերապահվում զոհ մատուցել Աստծուն, նույնիսկ՝ առանց տղամարդու մասնակցության: Թալմուդը (հուդայականության կրոնա-իրավական, բարոյական դրույթների շտեմարան) կնոջը վերաբերող հարցերում նույնպես առանձնանում է առաջադեմ մոտեցումներով. Թալմուդում կինը բնորոշվում է որպես ընտանիքի երջանկության ու հաջողության պահապան՝ «Օրհնանքը իջնում է տան վրա միայն կնոջ շնորհիվ»:

Չնայած հրեա կնոջը հուդայական արժեքներում տրվող բարձր կարևորությանը, սկզբնական շրջանում երկար ժամանակ պահանջվեց հրեական՝ իր էությամբ հայրիշխանական միջավայրում կնոջ կարգավիճակի շուրջ ավանդապահ կարծրատիպերի վերացման համար: Միջնադարում հրեա առաջադեմ մտածողները լուրջ քայլեր ձեռնարկեցին հրեա կանանց դերի բարձրացման ուղղությամբ, որոնք, սակայն, մշտապես արժանանում էին ավանդապաշտների դիմադրությանը: Կանանց՝ հրեության ազգակերտման հարցում պատասխանատվության և պարտականությունների՝ տղամարդկանց հետ հավասարապես ստանձնման գործընթացին մեծապես նպաստեց երկու կարևոր հանգամանք՝ արևմտյան ֆեմինիստական գաղափարախոսությունն ու սիոնիստական շարժումը, որոնց ազդեցության ներքո լուրջ առաջընթաց արձանագրվեց:

Հրեությունում կնոջ նկատմամբ ավանդապաշտ կարծրատիպերը թերևս կոտրվեցին հատկապես 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին՝ կապված Պաղեստինում Հրեական ազգային օջախի ստեղծման հետ, երբ հրեա կանայք ակտիվ մասնակցություն ունեցան հրեական պետականության կայացման գործընթացին: Անգնահատելի էր հրեա կանանց դերը Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստների հետապնդումներից հազարավոր հրեաների փրկության հարցում: Իսրայել պետության հիմնադրումից ի վեր հրեա կինը շարունակել է ակտիվորեն ներգրավվել պետականաշինության կարևորագույն գործում: Զգալի է նրանց ավանդը Իսրայելի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ: Ոչ պաշտոնական տվյալներով, վերջին տասնամյակում երկրի դիվանագիտական գործունեության մեջ ներգրավված կանանց մասնաբաժինը հաշվվում է 40-43%:

Կինն առանցքային նշանակություն ունի նաև հրեաների ազգային ինքնության տեսանկյունից: Իսրայել պետության հիմնադրումից երկու տարի անց՝ 1950 թ. ընդունված «Հրեաների հայրենադարձության մասին» օրենքում նշված է. «Հրեա է համարվում այն մարդը, որը ծնվել է հրեա կնոջից կամ ընդունել է հուդայականություն և չի դավանում այլ կրոն»:

**Կինը Իսրայելի պաշտպանության բանակում**

Հրեա ժողովրդի պաշտպանության և անվտանգության ապահովման հարցում հրեա կնոջ մասնակցության առաջին հիշատակումներին հանդիպում ենք դեռևս Հին Կտակարանում: Աստվածաշնչյան «Դատավորների գրքում» պատմվում է Դեբորա անունով հրեա կնոջ մասին (Ք. ա. մոտ 1200-ական թթ.), որը ներկայանում էր որպես ժողովրդի դատավոր, լուծում իր ժողովրդի ներկայացուցիչների դատական վեճե-



րը, իսկ հետագայում նաև` մարգարե, ժողովրդական ու քաղաքական առաջնորդ («Դատավորների գրքում» Դեբորան դասվում է առավել հռչակավոր դատավորների շարքին): Հետագայում, երբ քանանացիների թագավոր Յավինը սպառնում էր հրեա ժողովրդի անվտանգությանը, Դեբորան դարձավ իր ժողովրդի առաջնորդը և կոչ արեց պատերազմել թշնամու դեմ: Դեբորան հրեական ցեղերից մեկի առաջնորդին` «իսրայելցի դատավոր» Բարաքին հրամայեց զորք հավաքել ու պատերազմել քանանացիների դեմ: Սակայն Բարաքը համաձայնեց պատերազմել միայն այն դեպքում, եթե Դեբորան իր ձեռքը վերցնի հրեական զորքի հրամանատարությունը, ինչը խոսում է Դեբորայի զգալի ժողովրդական հեղինակության մասին: Դեբորան պատերազմում հանդես էր գալիս ոչ միայն որպես զորահրամանատար, այլև որպես հրեա ժողովրդի հոգևոր առաջնորդ: Մեջբերենք պատերազմի ընթացքում Դեբորայի հայտնի ելույթից. «Աստծո թշնամիները իսրայելցիների թըշնամիներն են և ընդհակառակը, այդ պատճառով Աստված իրենց կողմն է»: Բավական խորհրդանշական է նաև Դեբորա անվան իմաստը. այն եբրայերենից թարգմանաբար նշանակում է «մեղու», իսկ մեղուն Հին Արևելքում համարվում էր ռազմական հզորության խորհրդանիշ: Ավելին, հնագույն եգիպտական և հունական գերեզմանաքարերի վրա պատկերված մեղուն խորհրդանշում է հոգու հավերժությունն ու մաքրությունը, ասել է թե Դեբորան մարմնավորում է իր ժողովրդի հոգևոր ուժը: Դեբորայի մասին պատմությունը ցույց է տալիս դեռևս հնագույն դարաշրջանում հրեա ժողովրդի կյանքում կնոջ մեծ դերը: Հրեա կանանց խիզախության տիպիկ օրինակ է նաև 66-73 թթ. Հռոմեական կայսրության դեմ «Հրեական մեծ ապստամբության» տարիներին Մասադա ամրոցի ինքնապաշտպանությունը, որտեղ պաշարված շուրջ 967 հրեա ապստամբներ, կանայք, երեխաներ և տղամարդիկ, ինքնասպանություն գործեցին` գերադասելով մեռնել ազատ, քան ողջ մնալ գերեվարված հռոմեացիների կողմից:

Հրեաների ազգակերտման գործում տղամարդկանց հետ հավասար հրեա կանանց ակտիվ մասնակցության ջատագովներն էին հատկապես սիոնիստական շարժման հիմնադիր այրերը: Սիոնիստ գաղափարախոսները գտնում էին, որ Իսրայել պետու-

թյան հիմնադրման և համայն հրեության անվտանգության ապահովման հարցում առհասարակ իրենց ավանդը պետք է ունենան հասարակության բոլոր անդամները, կին թե տղամարդ: Իսրայել պետության առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի խոսքերով, «Բանակում զինծառայությունը հանդիսանում է քաղաքացիական պարտքի կատարման բարձրագույն խորհրդանիշը, և քանի դեռ կանայք ու տղամարդիկ հավասար չեն այդ պատվավոր պարտականության կատարման հարցում, չի կարելի խոսել կանանց իրական իրավահավասարության մասին»: Հրեա կանայք տղամարդկանց հետ կողք-կողքի ըզգալի ներդրում են ունեցել 20-րդ դարասկզբին Պաղեստինում առաջին հրեական բնակավայրերի գոյապահպանման գործընթացում, մարտնչել հրեական պետականության համար մղված պայքարում: Կանայք կամավոր հիմունքներով ներգրավվել են մասնավորաբար հրեական այնպիսի ընդհատակյա ռազմական խմբավորումներում, ինչպիսիք են Հագանան (որը հետագայում դարձավ Իսրայելի պաշտպանության բանակի հիմքը), Լեհին և Էցելը՝ կազմելով այդ կազմակերպություններում ներառված մարտիկների շուրջ 20%-ը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի դեմ պայքարին միացան շուրջ 6 հազար հրեա կանայք, որոնց շարքից առաջին հերթին պետք է հիշատակել հերոսուհի ու բանաստեղծուհի Հաննա Սենեշին (1921-1944 թթ.): 1930-ականներին Հունգարիայում սկսված հակասեմականության ալիքը Հ. Սենեշին ներգրավեց տեղի սիոնիստական երիտասարդական շարժման մեջ: Հ. Սենեշը պատկանում է Բուդապեշտի այն հրեաների շարքին, որոնք ցանկանում էին իրենց հետագա կյանքը կապել Պաղեստինում ապագա Իսրայել պետության ստեղծման գործընթացի հետ: 1939 թ. սեպտեմբերին նրան հաջողվեց տեղափոխվել Պաղեստինում գործող Նահալալ հրեական գյուղատնտեսական բնակավայր: Եվրոպայում նացիստների դեմ հրեաների դիմադրության կազմակերպման նպատակով Հագանան նախաձեռնեց հատուկ վերապատրաստված մարտիկների հավաքագրումը՝ դեպի Եվրոպա նրանց ինքնաթիռներով տեղափոխելու նպատակով: 1942 թ. Հ. Սենեշը համալրեց այդ կամավորների շարքերը՝ որպես կապավոր, իսկ 1944 թ. մարտին տեղափոխվեց Հարավսլավիայի պարտիզանական բազա: Երեք ամիս անց, սակայն, 1944 թ. հունիսի 9-ին հունգարական սահմանը հատելիս գերեվարվեց: 1944 թ.



*Հաննա Սենեշ (1921-1944 թթ.)*

նոյեմբերի 7-ին, 5 ամիս տևած հարցաքննություններից ու կտտանքներից հետո, որոնք այդպես էլ նրան չստիպեցին թշնամուն հայտնել ռադիոհաղորդիչի գաղտնի կոդը, գնդակահարվեց: 1950 թ. Սենեշի մասունքները տեղափոխվեցին Իսրայել և վերահանձնվեցին հողին Երուսաղեմի Հերցելի լեռան վրա: Իհարկե, Հաննա Սենեշի՝ որպես գերեվարված ու կտտանքների ենթարկված կնոջ կերպարը դեռ մի քանի տասնամյակ Իսրայելում ընկալվում էր որպես հրեության ամենաողբերգական էջերից մեկը: Սակայն հետագա տարիներին, Իսրայելում և համայն հրեությունում հրեական հերոսապատումների հիման վրա ազգային կոլեկտիվ հիշողության վերականգնման քաղաքականության արդյունքում Հաննա Սենեշը մարմնավորեց հրեության ու Իսրայելի պաշտպանության բանակի ազգային խորհրդանիշը, իսկ նրա պատմությունը ողբերգությունից դարձավ հերոսապատում: Հ. Սենեշի՝ որպես հայրենանվեր հրեա կնոջ և հերոսուհու կերպարով են այսօր Իսրայելի պաշտպանության բանակում բարոյա-հոգևոր ու ֆիզիկական պատ-

րաստություն անցնում հազարավոր իրեա կին զինծառայողներ:

Շարունակվեց իրեա կանանց անգնահատելի ավանդը իրեական պետականության պաշտպանության գործընթացում նաև Իսրայել պետության հիմնադրումից հետո: 1948 թ. մայիսի 16-ին հիմնվեց Իսրայելի պաշտպանության բանակի Կանանց կորպուսը, որի առաջին հրամանատարը դարձավ գնդապետ Շոշանա Գերշոնը: Կանանց կորպուսի հիմնական գործառույթներից էին երկրի ԶՈՒ-ում իրեա կանանց զինծառայության կազմակերպումը, ուսուցումը, նրանց իրավունքների պաշտպանությունը և այլն: 2001 թ., սակայն, Կանանց կորպուսը լուծարվեց, որի փոխարեն ստեղծվեց Իսրայելի ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետի՝ Կին զինծառայողների հարցերով խորհրդականի վարչությունը՝ գեներալ-մայոր Սյուզի Յոգևի գլխավորությամբ: Նախորդ ինստիտուտի համեմատ այս կառույցն օժտված էր առավել մեծ լիազորություններով, ինչը նույնպես վկայում է վերջին շրջանում Իսրայելի պաշտպանության բանակում և հասարակությունում կնոջ կարգավիճակի բարձրացման մասին: «Զինծառայության մասին» օրենքի համաձայն, պարտադիր հիմունքներով զորակոչման են ենթակա բոլոր 18 տարին լրացած, չամուսնացած և երեխաներ չունեցող իրեա աղջիկները: Հրեա կրոնավոր և այն կանայք, որոնց համար զինծառայությունը հակասում է իրենց բարոյական արժեքներին, անցնում են քաղաքացիական ծառայություն: Նկատենք, որ ի տարբերություն վերջիններիս, պարտադիր զինծառայություն անցած իրեա կանայք համեմատաբար հեշտ են ինտեգրվում երկրի հասարակական, սոցիալ-տնտեսական և, իհարկե, քաղաքական կյանքում, քանզի Իսրայելում զինծառայությունը երկրի ԶՈՒ-ում համարվում է կարևորագույն պլացդարմ յուրաքանչյուր քաղաքացու հետագա հասարակական առաջխաղացման համար: Սկզբում Իսրայելի պաշտպանության բանակում իրեա կանանց զինծառայությունը կազմում էր 22 ամիս, սակայն վերջին տարիներին այն ընդհուպ մոտեցել է տղամարդկանց պարտադիր զինծառայության ժամկետին, որը հաշվվում է 3 տարի: Իհարկե, սկզբնական շրջանում կանանց զինծառայությունը հիմնականում սպասարկող - վարչարարական և մատակարարման ոլորտներում էր, սակայն հետագա տարիների ընթացքում, երբ երկրի ԶՈՒ-ում ներգրավված իրեա կին զինծառայողները լուրջ հաջողություններ արձանագրեցին և զգալի ներդրում ունեցան արաբական երկրների



հետ Իսրայելի մղած պատերազմներում, անհրաժեշտություն առաջացավ կանանց ներգրավելու բանակի առավել մարտականացված ստորաբաժանումներում ևս: Իսրայելի ԶՈՒ-ում կանանց ինտեգրման խորացմանը նպաստեց նաև այն, որ գնալով մեծացավ երկրի պաշտպանության համակարգում զինծառայություն անցնել ցանկացող կանանց թվաքանակը: 1952 թ. Իսրայելում ընդունված «Զինծառայության մասին» օրենքի համաձայն, Իսրայելի պաշտպանության բանակում իրեա կանանց զինծառայությունը սահմանափակվում էր երկու հիմնական կետերով՝ մարտական գործողություններ (հիմնականում իրեա կնոջ գերեվարումից խուսափելու պատճառաբանությամբ) և ֆիզիկական բարձր կարողություններ պահանջող առաջադրանքներ:

Իսրայելի պաշտպանության բանակում իրեա կանանց ներգրավման հարցում լուրջ խթան հանդիսացավ 1955 թ. Հացոր ավիաբազայում «Մոսկիտո» տեսակի ինքնաթիռի վթարը, երբ հրկիզվող ինքնաթիռից զինծառայող, կոչումով սերժանտ Էսթեր Արդիտին, չնայած կյանքին սպառնացող վտանգին, մտնելով այրվող ինքնաթիռը՝ կարողացավ փրկել օդաչու, անձնակազմի հրամանատար Յակով Թալմոնին, ինչից ընդամենը մի քանի վայրկյան անց ինքնաթիռը պայթեց: Այդ սխրագործության համար Է. Արդիտին դարձավ Իսրայելի ԶՈՒ առաջին իրեա կին զինծառայողը, որը պարգևատրվեց «Իտուր հա-մոֆետ» (Մատուցած գերազանց ծառայությունների համար)՝ իր նշանակությամբ զինվորական երրորդ կարգի մեդալով:

1995 թ. Իսրայելի Գերագույն դատարանը փոփոխություններ մտցրեց երկրի «Զինծառայության մասին» օրենքում, ինչը հնարավորություն ընձեռեց կանանց ծառայելու նաև մարտական ստորաբաժանումներում, ինչպես նաև ուսանելու օդաչուների և ծովային հրամանատարների սպայական ուսումնական հաստատություններում: Արդյունքում 2001 թ. լեյտենանտ Ռոնի Ցուկերմանը դարձավ ռմբակոծչի օդաչուի կոչում ստացած առաջին կին զինծառայողը: Իսկ 2007 թ. սեպտեմբերին երկրի ԶՈՒ-ում ստեղծված կանանց հարցերով հատուկ հանձնաժողովի պատրաստած զեկույցում առաջարկվեց իրեա կանանց ընդգրկել զինվորական բոլոր ստորաբաժանումներում և զինծառայության հարցում առաջնորդվել ոչ թե սեռական պատկանելիության, այլ զինծառայողների որակական հատկանիշների սկզբունքով: Ավելին, Իսրայել պետության հիմնադրումից մինչև 20-րդ դարի 90-ականների վերջերը լուրջ սահմանափակումներ էին գործում կանանց՝ զինվորական բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնելու հարցում. այդ արգելքը վերացվեց միայն վերջին տասնամյակում, ինչը նոր խթան հանդիսացավ Իսրայելի պաշտպանության բանակում իրեա կանանց ներգրավվածության ընդլայնման գործընթացում: Ներկայում Իսրայելի պաշտպանության բանակի զինծառայողների շուրջ 35%-ը կանայք են: Վերջին երկու տարում Իսրայելի պաշտպանության բանակի հրամանատարությունը լուրջ քայլեր է ձեռնարկում ԶՈՒ-ի՝ մինչ այդ բացառապես տղամարդկանց համար նախատեսված մի շարք էլիտար դասընթացներում ընդգրկելու նաև կանանց: Վերջերս ավարտվեց երկրի պաշտպանության բանակի պատմության մեջ կին դիպուկահարների պատրաստման առաջին դասընթացը: Ընդ որում, կանայք կազմում էին դասընթացն անցած 16 շրջանավարտների մեծ մասը՝ 13-ը: Դասընթացը նախաձեռնվել էր 2004 թ. հիմնված «Կարակալ» հետևակային գումարտակի շրջանակներում՝ գերազանցապես իրեա կանանց մարտական պատրաստվածության ապահովման նպատակով:

Զգալի է իրեա կանանց ավանդը նաև Իսրայելի հատուկ ծառայությունների ու հետախուզական գործունեության բնագավառներում: Ներկայումս կանայք կազմում են Իսրայելի հետախուզական մարմինների օպերատիվ ստորաբաժանումներում ներգրավված անձնակազմի ավելի քան 20%-ը: Ոլորտում առավել աչքի ընկած իրեա կանանցից նախ և առաջ կարելի է առանձնացնել «Մոսադի» բարձրաստիճան հետախույզ, այդ կառույցի նախկին փոխիրամանատար Ալիզա Մագենին, Մալկա Բրավերմանին, որը Հագանայից համալրելով Մոսադի շարքերը՝ հետագայում դարձավ հետախուզության վարչական կառավարման հրամանատար, «Մոսադի» գործակալ Յաել Պոզներին: Թե՛ Մալկա Բրավերմանը և թե՛ Յաել Պոզները ակտիվ մասնակցություն են ունեցել մասնավորաբար ռազմական հանցագործ Ադոլֆ Էյխմանի հայտնաբերման գործում. Մ. Բրավերմանը մշակել է Ադոլֆ Էյխմանի ձերբակալման գործողության կազմակերպչական նախագիծը:

№ 1 (209) XX ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

# Դրօշակ - 1, 1910թ.

## 1909-1910

...Դժգոհ ենք նոր ռէժիմից: Դժգոհութիւնը Երիտասարդ Թիւրքիայի դէմ ծայր է տալիս ամենուրեք, նաև Արևմուտքում, ուր յուլիսեան օրերից յետոյ շատ ու սահման չունէին խանդավառ ներբողները օսմանեան վերանորոգիչների հասցէին: Այդ խանդավառութիւնն իջնում է: Զգում են, որ խաբուած են, և սկսում են, եւրոպական մամուլի մէջ քննադատական հարուածները, որ երբեմն ցասման ժեստեր են յարուցանում Բօսֆորի ափերին... Չափազանց ուրախալի է Երիտասարդթիւրքերի այդ ծայրայեղ զգայնութիւնը դէպի Արևմուտքից փեղացող քննադատութիւնները...

Ջը պէտք էր խաբուել, չէր էլ կարելի խաբուել: Յուլիսեան և ապրիլեան յեղափոխութիւնը զուտ լիբերալ, ազատամիտ մի հոսանք չէր, ընդունուած եւրոպական իմաստով: Զինուորական մի ուժեղ հարուած էր, որ չէր հիմնուած, տարաբախտաբար, հասարակական ոչ մի ուրիշ դասակարգի վրայ, ոչ իսկ բուրժուական տարրերի վրայ, որոնք ամենուրեք, ազատագրուած երկրների մէջ, հզօր կռւանն են եղել քաղաքական յեղաշրջման: Այդ բուրժուական տարրը գրեթէ բոլորովին բացակայում է թիւրք ու մահմեդական ընդհանրութեան մէջ և արևմտեան լիբերալիզմով տոգորուած միակ դասակարգը - եթէ հնարաւոր է դասակարգ անուանել - բարձր զինուորականութիւնն է, միացած փոքրաթիւ մտաւորականութեան հետ:

Եւ դա մի դժբախտ հանգամանք է, որ խորապէս անդրադառնում է օսմանեան սահմանադրութեան ճակատագրի վրայ: Դա մի դժբախտ հանգամանք է՝ ընդհանրապէս Թիւրքիայի համար, մասնաւորապէս փոքր ազգերի համար: Յեղափոխական փոքրամասնութիւնը, թէև ազդեցութեամբ պարկառելի, բայց թուով շատ է սահմանափակ: Այդտեղից և - միջնադարեան երկիւղը նորանոր հակահարուածների...

*Միւս կողմից՝ այդ փոքրամասնութիւնը վարակւած է ցեղական հեգեմոնիայի թոյնով: Այդտեղ - միջնազգային աղբիւրը ազգային հակամարտութիւնների ու հալածանքի... Փոքր ազգերը վախ ունին թէ հակահարւածների օրերում և թէ խաղաղութեան շրջանում:*

*Մի տեսակ բացառիկ կացութիւն այսօր արդէն ծանրանում է ոչ թիւրք ազգութիւնների վրայ: Աբդիւլ-Համիդեան մեռցնող րէժիմից յետոյ՝ այդ ազգերը զգում են այժմ թիւրք տարրի յարձակողական շօվինիզմի լուծը: Լայն ազատամտութեան խոստումներով հրապարակ նետւող սահմանադրութիւնը իր մի քանի համակրելի որոշումների շարքում մէկէն ի մէկ առաջ բերեց մի այլանդակ անակնկալ - Չորրորդ յօդւածը, որ ժխտում է ամենակոպիտ ձևով սահմանադրութեան էութիւնը և կռւի ու պառակտումի ջեռնոց է նետում երկրի ահագին ազգաբնակութեան:*

*Գանգատներ, այո, դեռ շատ ունինք: Կայ, սակայն, մեծ Կօշմարը, որ գալիս է չէզոքացնելու մեր բոլոր տրտունջները, մեր ամենացաւոտ վէրքերը... Արդեօք ազատւա՞ծ ենք վերջնականապէս արեան նախճիրներից... Սև, չարագուշակ ոգիները դեռ ճախրում են դժբախտ երկրի վրայ, տարածելով մերթ ընդ մերթ ահաւոր ու քստմնելի շշուկներ, գուշակելով նոր փոթորիկներ, րէակցիայի նոր վերադարձ... Ոչինչ չընդունենք au tragique և խելագար վայնասունով չը ջգենք մեր երկիրը: Բայց և պարտաւոր ենք լուրջ ընդունել երևոյթը, որպէսզի նորէն չը զոհենք մեր զազրելի անփութութեան: Այդ տեսակ շշուկների պարբերական տարածման հանգամանքը ինքնին արդէն մտատանջող է: Եւ այս վիճակը դեռ գուցէ երկար կը շարունակւի...*

*Եւ մենք այսօր, դժբախտաբար, դեռ հարկի մէջ ենք՝ շեփորելու արթնութեան, հսկողութեան անհրաժեշտութիւնը... Վա՜յ այն ժողովրդին, որ դիւրութեամբ մոռանում է անցեալի փորձութիւնները, վա՜յ նրան, որ չի աճապարում՝ քաղելու այդ անցքերից ափիպողական հրահանգները:*

*Ի՞նչ վիճակի մէջ է այսօր մեր հավաքական ինքնապաշտպանութիւնը - այս մեծ ու նզովեալ հարցը, որ դարձեալ ցցւում է մեր առջև այս նոր տարում... Նա դարձեալ բոլոր հարցերի կենտրոնումն է: Այդ հարցը չը պէտք է մոռանան մեր ազգութեան այն տարրերը, որոնք այսօր ազատ մամուլի թևերի վրայ կրկէս են մտել՝ գօտեմարտելու ժողովրդական և մարտական կազմակերպութիւնների հետ: Վերջինները բնաւ չեն տոգորւած այդպիսի վայրենի գօտեմարտութեան ախորժակներով: Նա միանգամայն անժամանակ է և մեծ մասամբ զուրկ գաղափարական հիմունքներից ու դրդումներից: Դրսի ուժերի դէմ է, որ պէտք է սպառազինւել, ոչ ներսի: «Դուրսը» դեռ յղի է սպառնազին փոթորիկներով և մենք... կարծես դեռ գտնւում ենք բիւզանդական իդէօլօգների վիճակում, որ սելջիւկային ահաւոր արշաւանքի հանդէպ խորասուզւել էին ներքին յոռի, բնազանցական վէճերի մէջ...*

# Որ ապրի հիշողությունը

*Ազգեր կը գոյատեւեն ու կը հզօրանան իրենց հաւաքական յիշողութեամբ ու պահանջատիրութեամբ: Ժողովուրդի մը հաւաքական յիշողութիւնը կենսական է ինքնանանաչողութեան համար: Նոր սերունդը յատկապէս պէտք է ծանօթ դառնայ իր անցեալի պատմութեան լուսաւոր թէ մութ էջերուն, որպէսզի կարենայ իր ժողովուրդին ապագան կերտել:*

*Արամ Ա Կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ Յիշատակարան Ատանայի աղէտի,*
*Ա հատոր, Անթիլիաս, 2009, 340 էջ*

Սա մի փոքր հատված է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսի հայրապետական պատգամից, որ նա հղում է առ հայ ժողովուրդ Ադանայի ջարդերի 100-ամյակի առիթով: Ու որպես այդ պատգամի իրագործման առաջին քայլ, այսօր արդեն հայ ընթերցողի սեղանին է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Կիլիկիայի հայության պատուհասած մեծագույն աղետի մասին պատմող հանրագիտարանային հրատարակության անդրանիկ հատորը: Դրանց թիվը կլինի հինգ, ընդհանուր ծավալը՝ ավելի քան երկու հազար էջ: Երկու հազար էջ վավերագրեր, ականատեսների վկայություններ, գրականգեղարվեստական անդրադարձներ, քաղաքագիտական վերլուծություններ: Այս կերպ ահա կներկայացվի Կիլիկիայի աղետը, որ բազում դժբախտություններ բերեց մեր ժողովրդին: Միայն Ադանայում և նրա շրջակայքում, ճշգրտված տվյալներով, հաշված օրերի ընթացքում նահատակվեց 30 հազար մարդ, որբացավ 7883 երեխա, 4072 կին այրիացավ, 30 հազար մարդ մնաց անօթևան: Ավերվեց, թալանվեց ու հրկիզվեց 32 եկեղեցի, 19 դպրոց, 2923 տուն, 593 խանութ, 265 ագարակ, 18 պանդոկ, 2 գործարան, 23 ջրաղաց: Եվրոպական տերությունները հայ ժողովրդի այդ ողբերգությունը դիտում էին ամենասառն անտարբերությամբ, իսկ եթե հետաքրքրվում էլ էին, ապա դա անում էին միայն Թուրքիայում իրենց հետաքրքրություններից ելնելով և այդ երկրի վրա իրենց ազդեցությունն ամրապնդելու նպատակով: Այս ամենի մասին, իհարկե, շատ է ասվել ու գրվել: Ողջ աշխարհում իրենց բողոքի ձայնն են բարձրացրել ժամանակի ամենալուսավոր մարդիկ, իսկայական ջանք է ներդրվել աղետի բերած սարսափները համաշխարհային հանրության գիտակցությանը հասցնելու համար: Այսօր էլ շարունակվում է այդ գոր-



ծը: Տակավին վաղ է ենթադրել, թե Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ներկա հանգրվանն այլևս բավարար հիմքեր է տալիս ասելու, որ ժամանակակից աշխարհը համապարփակ պատկերացում ունի 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբին Թուրքիայում տեղի ունեցած զանգվածային հայահալածության մասին: Դեռևս հրատարակության փուլում գտնվող այս մատենաշարը, որ կթարգմանվի նաև այլ լեզուներով, կգա լրացնելու և ամրապնդելու եղած պատկերացումները, նաև դարբնելու մեր հավաքական հիշողությունը, որ, այո, կենսական է մեր ինքնաճանաչողության համար ու նաև մեզ պետք է մեր ժողովրդի ու երկրի ապագան կերտելու համար:

Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետի թելադրությամբ սկիզբ առած այս հանրագիտարանային հրատարակությունը կներառի կոտորածից մի կերպ խուսափած ականատեսների, իրենց տառապյալ եղբայրների և քույրերի ցավն ու վերքը մի փոքր մեղմելու նպատակով Ադանա մեկնած ազգային գործիչների, մտավորականների և կիլիկյան ահավոր դժբախտություններից ազդված գրական էջեր թողած բանաստեղծների ու գրողների հուշագրություններ, փաստագրական, գեղարվեստական ու այլ բնույթի գրություններ, տեղեկագրեր, պաշտոնական ելույթներ, նամակներ, լուսանկարներ:

Մատենաշարի անդրանիկ հատորը բացվում է 1909-ի ապրիլի 13-ին Ադանա հասած արձակագիր Սուրեն Պարթևյանի (Սիսակ Պարտիզպանյան) «Կիլիկյան արհավիրքը» հատորի Բ հրատարակությամբ: Այստեղ տեղ է գտել նաև Ազգանվեր հայուհյաց ընկերության ներկայացուցիչ Արշակուհի Թեոդիկի «Ամիս մը Կիլիկիա. կցկտուր նոթեր»-ի Բ հրատարակությունը: Թե առաջին և թե երկրորդ գործերը փաստավավերագրական գրականության նմուշներ են և իրենց լրագրական և օրագրային բնույթով դեպքերը տեղեկագրելու հստակ նպատակ են հետապնդում: Հետագա հատորներում ընթերցողին կներկայացվեն Զապել Եսայանի «Աւերակներու մէջ» ստեղծագործությունը, որ գեղարվեստական հստակ դիմագիծ ունի, Հակոբ Թերզյանի՝ ժամանակին մեծ արձագանք գտած «Կիլիկիոյ աղէտը» հաստափոր հուշագրության Բ հրատարակությունը, Հակոբ Պապիկյանի «Ատանայի եղեռնը. տեղեկագիր Յակոբ Պապիկեանի» թանկարժեք փաստաթուղթը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Սահակ կաթողիկոսի կիլիկյան նամակները և շատ այլ նյութեր, որոնք արձագանքում են միմյանց ու կազմում այս ամբողջական հիշատակարանը: Կազմողների վկայությամբ՝ այն հրամցվում է նահատակների սրբազան կտակին և Հայ դատի դրոշակիր նորահաս սերունդներին:

Ամփոփելով ասվածը՝ վերահաստատենք «Ատանայի կոտորածի 100-ամեակի մատենաշարի»՝ «Յիշատակարան Ատանայի աղէտի» անդրանիկ հատորի «Երկու խոսք»-ում արտահայտված միտքը, որ հանրագիտարանային այս հրատարակությունը կրկնակի նշանակություն ունի՝ նախ որպես վկայարան Հայոց ցեղասպանության և ապա՝ որպես ուղեցույց մերօրյա հայ պահանջատեր սերնդի նպատակասլաց պայքարի:

*Էրիկ Անդրեասյան*

# «Դրօշակ»- 2009


| Խորագիր-վերնագիր | Հեղինակ | Թիվ | Էջ |
|---|---|---|---|
| **Խմբագրական** | | | |
| 2009-ի մարտահրաւէրները եւ անելիքները | | 1 | 2 |
| Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք | | 2 | 2 |
| Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը եւ «Դրօշակ»-ի կլոր սեղանը | | 3 | 2 |
| Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման տեղապտոյտը | | 4 | 2 |
| Լիարժէք այլընտրանք | | 5 | 2 |
| Լիարժէք այլընտրանք | | 6 | 2 |
| Ստեփանակերտում գումարուած Համահայկական համաժողովի հետքերով | | 7 | 2 |
| «Վէմ» համահայկական հանդէսը | | 8 | 2 |
| Պարտադրուած պայմաններ՝ առանց նախապայմանների | | 9 | 2 |
| Նախաստորագրումից՝ ստորագրում, ստորագրումից...համակարգային իշխանափոխութիւն | | 10 | 2 |
| Հայաստանեան մեր գործունէութեան ուղենիշերը | | 11 | 2 |
| **Հաղորդագրութիւն** | | | |
| Մամլոյ հաղորդագրութիւն | ՀՅԴ Մամլոյ Դիւան | 5 | |
| **Տեսական** | | | |
| Ժողովրդավարութեան փորձը Հայաստանում. Հարցադրումներ | Սիւզան Խարտալեան | 2 | 20 |
| Ժողովրդավարութեան փորձը Հայաստանում. Հարցադրումներ (շարունակութիւն) | Սիւզան Խարտալեան | 3 | 20 |
| Ազգայնութիւն թէ՞ ազգայնականութիւն | Կարէն Խանլարեան | 6 | 15 |
| Ազգային պետութիւն ստեղծելու ճանապարհին | Վահան Դիլանյան | 7 | 22 |
| Սոցիալական յեղափոխութիւն | Կարէն Խանլարեան | 8 | 25 |
| Մտքեր սոցիալիզմի մասին | Կարէն Խանլարեան | 11 | 33 |
| **Տեսակէտ** | | | |
| Սեւրի պայմանագրով հաստատված տարածքների բնակչության թիվն ու էթնիկ կազմը | Հայկազուն Ալվրցյան | 1 | 33 |
| Ինչու սոցիալիզմ | Ալբերտ Էյնշտեյն | 7 | 36 |
| Ժամանակակից Հայոց պատմութիւնն ու յաղթանակի տեսութեան անհրաժեշտութիւնը | Սիւզան Խարտալեան | 8 | 36 |
| Ժամանակակից Հայոց պատմութիւնն ու յաղթանակի տեսութեան անհրաժեշտութիւնը | Սիւզան Խարտալեան | 9 | 24 |
| «Այս ընդհանուր աղէտը մեծ» կամ՝ դէպքերը Թուրքիոյ կողմէն դիտուած | Վաչէ Բրուտեան | 12 | 9 |
| **Կլոր սեղան** | | | |
| Ճգնաժամ. Համաշխարհային եւ հայաստանյան դրսեւորումներ | Նյութերը՝ Է. Անդրեասյանի | 3 | 6 |
| Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում. Պատմական ճշմարտություններ եւ մերօրյա մտահոգություններ | Նյութերը՝ Է. Անդրեասյանի | 4 | 6 |
| Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում. | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սահմանի բացումը պարզ արարողակարգ չէ | Նյութերը՝ Է. Անդրեասյանի | 5 | 4 |
| Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ճանապարհների վերաբացման առեւտրատնտեսական հիմնախնդիրները | Նյութերը՝ Է. Անդրեասյանի | 6 | 4 |
| Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ճանապարհների վերաբացման առեւտրատնտեսական հիմնախնդիրները | Նյութերը՝ Է. Անդրեասյանի | 7 | 4 |

**Պատմական-Պատմաբանական**

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ-ում 1920 թ. բոլշեւիկների մայիսյան ելույթների եւ դրանց գնահատականի շուրջ | Արման Եղիազարյան | 5 | 16 |
| ՀՅԴ մասնակցությունը 1910 թ. Կոպենհագենի միջազգային սոցիալիստական կոնգրեսին | Կարեն Հակոբյան | 10 | 19 |
| ՀՅ Դաշնակցության մուտքը Սոցիալիստական ինտերնացիոնալ. Շտուտգարտի միջազգային սոցիալիստական համաժողովը | Կարեն Հակոբյան | 6 | 24 |

**Իրավագիտական**

| | | | |
|---|---|---|---|
| Իրավական եւ քաղաքական փաստարկները ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում | Ալեքսանդր Մանասյան | 2 | 7 |

**Հարցազրույց**

| | | | |
|---|---|---|---|
| Հայ դատի պայքարը ինքնանպատակ չէ | Հրանտ Մարգարյան | 2 | 4 |
| Սումգայիթ՝ ցեղասպանության նորագույն օրրան | Նյութը՝ Է. Անդրեասյանի | 2 | 10 |
| Թուրքիայի ոճը անհարիր է հարաբերություններ հաստատելու հարթությանը | Լեւոն Մկրտչյան | 9 | 5 |
| Պահանջատիրության հանգրվանները հաղթահարվում են ազգովին | Մարիո Նալբանդյան | 10 | 4 |
| Պահանջատիրության հանգրվանները հաղթահարվում են ազգովին | Մկրտիչ Մկրտչեան | 11 | 5 |
| Դաշնակցությունը գնում է հիմնական լուծումների | Հրանտ Մարգարյան | 12 | 2 |

**Սոցիալ-տնտեսական**

| | | | |
|---|---|---|---|
| Հայաստան-Իրան գազային համագործակցության հեռանկարները | Աշոտ Եղիազարյան | 1 | 5 |
| Ինչ է իրենից ներկայացնում «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը | Աշոտ Եղիազարյան | 2 | 16 |
| «Ազատ շուկայի» ճգնաժամը եւ հակակշիռ մոդելները | Բենիամին Միրզոյան, Վլադիմիր Գրիգորյան | 8 | 4 |
| Տնտեսական միֆեր եւ իրական տնտեսություն-2 | Արա Նռանյան | 9 | 9 |
| Ազատագրված շրջանների տնտեսական զարգացումը Հայաստանի տնտեսական անվտանգության թիվ 1 խնդիր | Նորայր Մանասերյան | 11 | 8 |

**ԼՂՀ հիմնախնդիր**

| | | | |
|---|---|---|---|
| Ազատագրված տարածքների պատմական նշանակության հարցի շուրջ | Հրանտ Աբրահամյան, Գուրգեն Գեղամյան | 9 | 14 |

**Կրթական**

| | | | |
|---|---|---|---|
| Պետություն-կրթություն-մասնավոր հատվածների եռանկյուն | Սուրեն Պարույան | 7 | 30 |

**Մշակույթ**


| | | | |
|---|---|---|---|
| Հեղափոխական երգը որպես հայ մարդու հոգու արտացոլում | Մարիամ Կիրակոսյան | 10 | 33 |


**Հայ դատ**


| | | | |
|---|---|---|---|
| 1918. Համաշխարհային ռազմավարական վերջնախաղը եւ Հայաստանի խոյանքը | Լեւոն Շիրինյան | 1 | 9 |
| Սեւրի պայմանագրի վերլուծություն | Ավագ Հարությունյան | 8 | 12 |
| Ինչո՞ւ չի կարելի ստորագրել Կարսի պայմանագիրը | Տիրան Լոքմագյոզյան | 9 | 20 |
| Հայաստանի անկախության պատերազմը (1918 թ.). Բաքվի էպոպեան | Լեւոն Շիրինյան | 10 | 9 |
| Հայաստանի անկախության պատերազմը (1918 թ.). Բաքվի էպոպեան (շար.) | Լեւոն Շիրինյան | 11 | 13 |


**Դաշնակցական բեմ**


| | | | |
|---|---|---|---|
| Ռուստոմի գաղափարական մեծութիւնը | Կարէն Խանլարեան | 2 | 34 |


**Մեր երախտավորները**


| | | | |
|---|---|---|---|
| Մամուլի եւ համերաշխութեան զինուոր Եղիշէ Թոփչեան | Աւօ Գաբրճեան | 12 | 34 |


**Հայկական օջախ**


| | | | |
|---|---|---|---|
| Այնճար՝ փոքր Հայաստան մը Հայաստանէն դուրս | Գէորգ Աբէլեան | 12 | 38 |


**ՀՀ Ազգային ժողով**


| | | | |
|---|---|---|---|
| Պաշտպանենք մեր զինանշանը օրենքի ուժով | Արծվիկ Մինասյան | 10 | 16 |
| Հայոց ցեղասպանության ուսուցման պատասխանատվության հարցը հայաստանյան օրենսդրությունում | Արծվիկ Մինասյան | 11 | 39 |


**Նյութեր թուրք պատմաբանների համար**


| | | | |
|---|---|---|---|
| Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.) | Մելինե Անումյան | 1 | 13 |
| Հայոց կոտորածների կազմակերպմամբ 1919-1920 թթ. Թուրքիայում հարուցված դատական գործերը. երեք մահապատիժ | Մելինե Անումյան | 2 | 29 |
| Յոզղատի գավառի եւ Տրապիզոնի նահանգի տեղահանության ու կոտորածների դատավարությունները ըստ «Ալեմդար» օրաթերթի | Մելինե Անումյան | 3 | 33 |
| Անատոլիայում մի ուրվական է պտտվում | Տոլգա Էրեն | 4 | 25 |
| Յոզղատի հայոց տեղահանության եւ կոտորածների դատական նիստերի արձանագրությունները | Մելինե Անումյան | 4 | 37 |
| Վանը հին ու նոր կոտորածների միջեւ | Մայեր Օուեն Ուիլյամս | 6 | 40 |
| Տրապիզոնի հայոց տեղահանության եւ կոտորածների դատական նիստերի արձանագրությունները | Մելինե Անումյան | 7 | 14 |
| Մի կողմ թող Դաշնակցության արխիվը, տես օսմանյանը | Այշե Հյուր | 12 | 13 |


**Տարածաշրջան**

Սամցխե-Ջավախք հայկական տարածաշրջանի
կրթական վիճակը վերջին

| | | | |
|---|---|---|---|
| 20-ամյակում (1988-2008 թթ.) | Վահե Սարգսյան | 1 | 21 |
| Ջավախքում ստեղծվելիք հայկական պետական բուհը հայության համար պետք է դառնա համազգային խնդիր | Վահե Սարգսյան | 5 | 25 |
| Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ստեղծումը. ոլորտի զարգացման հեռանկարների շուրջ | Կարեն Վերանյան | 5 | 32 |
| Կովկասյան մեծ խաղ: Թուրքիայի վերադարձը | Արտակ Զարգարյան | 5 | 41 |
| Ճշմարտությունը Նորաշենի եկեղեցու հիմնախնդրի մասին | Ռուբեն Նահատակյան | 6 | 32 |
| Ազգայնամոլությունը խարխլվող թուրքական ինքնության համայնապատկերում | Հայկազուն Ալվրցյան | 9 | 32 |
| Նախիջեւան. թուրք-ադրբեջանական հակասությունների շուրջ | Կարեն Վերանյան | 11 | 18 |
| Թուրքիան աշխարհաքաղաքական շահերի խաչմերուկում | Կ. Վառուշանյան | 11 | 24 |

**Նեմեսիս-90**

| | | | |
|---|---|---|---|
| Սողոմոն Թեհլիրյանի ոդիսականը | Բաբկեն Սիմոնյան | 3 | 25 |
| Սողոմոն Թեհլիրյանի ոդիսականը (շար.) | Բաբկեն Սիմոնյան | 4 | 18 |
| Հայկական «Նեմեսիսը» գործողության մեջ | Արարատ Հակոբյան | 5 | 43 |

**Տեղեկանք**

| | | | |
|---|---|---|---|
| Տարածաշրջան եւ կազմակերպութիւններ. GUAM | Ժիլբերտ Մուշկամբարեան | 1 | 28 |
| Վեց օր Արարատի գագաթին | Վարդան Գրիգորյան | 10 | 39 |
| Հրեա զինվորի դերը հրեությունում | Կարեն Վերանյան | 12 | 22 |

**Ռեպլիկ**

| | | | |
|---|---|---|---|
| Մի մրոտեք սոցիալիզմի գաղափարը | Էդիկ Անդրեասյան | 1 | 39 |
| Վիրտուալ հայրենիքի ջախջախումը. իրականում ինչո՞վ է զբաղված «Առավոտ» թերթը | Էդիկ Անդրեասյան | 2 | 37 |
| Պատմութեան նենգափոխութեան դէմ | Կարէն Բասենցի | 3 | 40 |
| Այս դասը, բարեկամներս, ե՞րբ ենք սովորելու | Էդիկ Անդրեասյան | 6 | 42 |

**Անհայտ էջեր**

| | | | |
|---|---|---|---|
| Վճռական ժամին. Անձնական յուշեր ու ապրումներ | Յովհաննէս Քաջազնունի | 1 | 40 |
| Վճռական ժամին. Անձնական յուշեր ու ապրումներ (շար.) | Յովհաննէս Քաջազնունի | 2 | 41 |
| Վճռական ժամին. Անձնական յուշեր ու ապրումներ (շար.) | Յովհաննէս Քաջազնունի | 3 | 42 |

**Անտիպ էջեր**

| | | | |
|---|---|---|---|
| Էդիկ Յովհաննէսեան՝ Ղարաբաղեան պոռթկումը, սփիւռքը, Մինխենի մեր կեդրոնը | | 10 | 28 |
| Նազարէթ Պէրպէրեան՝ Դաշնակցութեան հայրենադարձութիւնը | | 12 | 29 |

**Նամակ խմբագրությանը**

| | | | |
|---|---|---|---|
| Երազ | Երանոս Գասպարյան | 4 | 36 |

## Մի երգի պատմություն


| | | | |
|---|---|---|---|
| Սպարապետ Գարեգին Նժդեհին նուիրուած երգին 100-ամեակին առիթով | Աւօ Գաբրճեան | 7 | 41 |


## Հոբելյան


| | | | |
|---|---|---|---|
| Մեր մեծ ժամանակակիցը | Ռուբեն Հովսեփյան | 11 | 43 |


## «Դրօշակ»-ը 100 տարի առաջ


| | | |
|---|---|---|
| 1908 -1909 | 1 | 44 |
| Ստոլիպին-Վորոնցովեան ռէժիմը եւ «Դաշնակցութիւնը» | 2 | 44 |
| Պառլամենտական ընտրութիւնները Իտալիայում | 3 | 45 |
| Կիլիկիան արիւնաւէր | 4 | 43 |
| Ռուսաստան. Կովկասյան տագնապը. Թիֆլիս, 15 մայիս | 5 | 48 |
| Արթո՞ւն | 6 | 45 |
| Բռնակալութեան անկումը: Պարսկաստան | 7 | 45 |
| Թիւրքիա: Արտագաղթը | 8 | 45 |
| Թիւրքիա (հատուած) | 9 | 45 |
| Ե. Ընդհանուր Ժողովը | 10 | 45 |
| Ինքնապաշտպանութիւն | 11 | 45 |
| Դրօշակի շուրջը | 12 | 45 |


## Նոր գրքեր


| | | | |
|---|---|---|---|
| Բանտարկեալի մը յուշերը | Էդիկ Անդրեասյան | 1 | 47 |
| Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը եւ գործը) | Էդիկ Անդրեասյան | 2 | 46 |
| Մարդասպանի սպանությունը | Էդիկ Անդրեասյան | 3 | 46 |
| «Ժամանակի գետը» | Էդիկ Անդրեասյան | 4 | 46 |
| «Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի հանրապետությունում (1923-2005 թթ.)» | Էդիկ Անդրեասյան | 5 | 52 |
| «Եռաբլուր» | Էդիկ Անդրեասյան | 6 | 46 |
| Ընկեր Էդիկի աշխատասենյակում | «Դրօշակ» | 7 | 46 |
| Պետք է փրկել հայերին | Էդիկ Անդրեասյան | 8 | 46 |
| Քաղաքներու կախաղանները | Էդիկ Անդրեասյան | 9 | 46 |
| ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.) | Էդիկ Անդրեասյան | 10 | 46 |
| Արեւմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները | Էդիկ Անդրեասյան | 11 | 46 |
| Նա տեր էր | Ռուբեն Հովսեփյան | 12 | 46 |


## Պատկերասրահ


| | | |
|---|---|---|
| Գարեգին Պաղոյան | 1 | 48 |
| Արեւիկ Պետրոսյան | 2 | 48 |
| Հենրիկ Սիրավյան | 3 | 48 |
| Ժանսեմ (Հովհաննես Սեմերջյան) | 4 | 48 |
| Գեւորգ Մարտիրոսյան | 5 | 52 |
| Նինա Հայ-Արտյան | 6 | 48 |
| Ռուբեն Աբովյան | 7 | 48 |
| Էմիլ Գազազ | 8 | 48 |
| Տիգրան Բարխանաջյան | 9 | 48 |
| Ռուբեն Ադալյան | 10 | 48 |
| Տարոն Մուրադյան | 11 | 48 |
| Շոթա Ոսկանյան | 12 | 48 |




Էդվարդ Խանոյան

# ԷԴՎԱՐԴ ԽԱՆՈՅԱՆԻ ՍՐԲԱԼՈՒՅՍ ԽԱՉԵՐԸ



Խոսել Էդվարդ Խանոյանի մասին, նշանակում է խոսել ինքնատիպ ու բացառիկ գործեր ստեղծող մարդու մասին: 1995 թվականից Էդվարդ Խանոյանը ստեղծել է ավելի քան 7000 խաչ-մանրանկար, որոնցից յուրաքանչյուրը անկրկնելի է ու հմայիչ: Այդ խաչ-մանրանկարները քանիցս ներկայացվել են մեր հանրությանը տարբեր անհատական ցուցահանդեսների առիթով, նաեւ՝ հեռուստատեսային հաղորդումների ժամանակ: Խանոյանի խաչ-մանրանկարների մասին հիացմունքով են արտահայտվել մեր ժամանակների ճանաչված արվեստագետները, մտավորականները:

Խանոյանը ստեղծագործելիս օգտվում է հայ մշակույթի անսպառ գանձարանից, մանրակրկիտ ուսումնասիրում հայ միջնադարյան մանրանկարչությունը, խաչքարային արվեստը, ինչու չէ՝ նաեւ ժանեկագործությունը, ոսկերչությունը, կիրառական արվեստի մյուս բնագավառները: Այս ամենի համաձուլվածքից են ծնունդ առնում Էդվարդ Խանոյանի աստվածապարգեւ խաչերը, որոնցից ամեն մեկում Տիրոջ օրհնությունն է խտացած, նրա խորհուրդը: Աստծո կամոք Խանոյանը մեծ առաքելություն ունի, քանզի կրողն է Տիրոջ պատգամների ու դրանց կատարողը:

Էդվարդ Խանոյանի համար առանձնապես նվիրական մի մասունք է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդից ստացած ուղերձը, որը ասես հորդոր լինի շարունակելու աստվածահաճո այդ առաքելությունը: Ու այդ հորդորով առաջնորդված նա հավատարիմ է մնում իր սկզբունքներին:

Նրա խնկաբույր խաչ-մանրանկարները, իիրավի, հույսի ու հավատի խորհրդանիշ են մեր սուրբ մասունքները վերագտնելու ճանապարհին:



















# ԴՐՕՇԱԿ





